

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

ԹՈՂ ՅԱԿԵ ՎԱՌ ՄԱՅ ԿԻԼԿԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ ԶԱՐԸ

ՏՕԳԹ. Ա. ԳԱԶԱՆՆԵԱՆ

Հիւսիսային Սուրիոյ Հալէպ քաղաքի մէջ հիմ դրած առաջին վարժարանը հանդիսացաւ Կիլիկեան Վարժարանը, որ այս տարի կը բոլորէ իր 85-ամեակը:

Ան ծնունդն է դժուարին այլ իրադրութիւններէ: Յաճախ յուսահատական, բայց բնաւ չ'ընկերկող կամք ու մարտահրաւէր դարձաւ անոր գոյութեան պատմութիւնը: Տոկաց, գոյատեւեց ու արդիւնաւորուեցաւ ան:

Յետ եղեռնեան յուսակորոյս քակորներու դէպի կեանք առաջնորդող խնամակալ կանչ դարձաւ Կիլիկեանը:

Անոր առաջնորդները, ազգի, հայրենիքի, հայ մշակոյթի շերտնաւոր հնչակեան գաղափարի երկրպագուներ՝ ինչպէս Գեորգ Նալպանտեան, Տէր Յովհաննէս Ա. Քեյ. Էթմէմեան, Յարութիւն Թէրզեան, Լուի Հէֆիմեան եւ ձորն Գասպարեան՝ վաղուան յուսանք հաւատք իրենց ներսիդին, վերապրումի առաջին իսկ հանգրուանին, ի մի հաւաքեցին իրենց բաղդին լուսած եղեռնով որբացած մեր մանուկ, պատանի, այլ անտէր հայորդիները, զանոնք ֆիզիկապէս հոգալու եւ անոնց ապահովելու համար հայրենի կրթութիւն:

Հիմնադիր անդամներու յանդուրձան կրթական միտմանով անոնց գաղափարակից, այլ երախտաշատ խնամակալ մարմիններու կողմէ, գլխաւորութեամբ, այլոց կարգին, Ռուբէն Եղազարեաններու, Թիմպէլեաններու, Թուրմանեաններու եւ այլ արժանաւոր առաջնորդներու, որոնք գարկ տուին գաղութի կրթական, մարզական, մշակութային ու ազգային առողջ արեւելումին:

Այդ օրերէն սկսեալ, նոյնպէս մեր հաւատարմ տնօրէնները, սկսեալ Սէրայտարեան Արքահամէն (1921-1924), Պապայեան Գեորգէն, Թաշմեան Գեորգը մինչեւ Արսէն Կիտուր, Սեդրակ Զաւէն, Երուանդ Պապայեան, Ռուբէն Տիրարեան, Ազնիւ Ձիրմիշեաններ՝ հանդիսացան մղիչ ու ժը հայնոր գաղափարական սերունդներու հոգեմտաւոր դաստիարակութեան:

Անոնք, գործակցաբար իրենց նուիրեալ ուսուցիչներուն՝ ջամբեցին լոյս: Մշակեցին լեզու: Տուին գիր, մշակոյթ: Կերտեցին անհատականութիւն: Հոգիներէն ներս մուծեցին սէր՝ հանդէպ ազգին, հայրենիքին: Ներշնչեցին հաւատք՝ մեր ժողովուրդի լինելութեան հանդէպ: Սորվեցուցին նուիրում յանուն լաւին, ազգին, ընդհանուրին:

Շարք էջ 19

ԵԱՀԿ-Ի ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿՈՉ Կ'ԸՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻՆ ԿՐԿՆԱՊԱՏԿԵԼ ԻՐԵՆՑ ԶԱՆՔԵՐԸ

ԵԱՀԿ-ի Նախարարներու Խորհուրդը Դեկտեմբեր 5-ին ընդունած է յայտարարութիւն մը՝ Լեռնային Ղարաբաղի վերաբերեալ: Յայտարարութեան մէջ ըսուած է, որ 2006 թուականի ընթացքին բանակցութիւնները «կողմերը մօտեցուցած են հակամարտութեան կարգաւորման հիմնական սկզբունքներու շուրջ համաձայնութեան», կոչ ընելով Հայաստանի եւ Ատրպէյճանի նախագահներուն՝ գալիք տարուայ ընթացքին «կրկնապատկել՝ այդ սկզբունքները վերջնական տեսքի բերելու ուղղուած ջանքերը»:

«Մեզ կ'ողբուրէ, որ ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի միջնորդութեամբ եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի աջակցութեամբ 2006 թուականին ընթացած բանակցութիւնները կողմերուն մօտեցուցած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան լուծման հիմնական սկզբունքներու շուրջ համաձայնութեան», ըսուած է յայտարարութեան մէջ: «Մենք կ'ողջունենք այս ջանքերուն Մեծ Ութնեակի առաջնորդներու աջակցութիւնը, որոնք մասին անոնք յայտարարեցին Սանտո Պետերբուրգի մէջ Յուլիսին կայացած գագաթի ժողովին»:

Միւս կողմէ, Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան «Ռոյթըրզ» գործակալութեան ըսած է, որ յառաջ շարժելու կարելիութիւնը ինք կը

տեսնէ, եթէ Ատրպէյճան ճանչնայ Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքը:

«Եթէ Ատրպէյճանն ի վերջոյ ընդունի Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքը, որպէսզի դրա բնակիչները կարողանան որոշել իրենց կարգավիճակը, իրենց ճակատագիրը եւ անվտանգութիւնն ապահովելու եղանակները, ես իրօք առաջ շարժուելու հնարաւորութիւն եմ տեսնում», - ըսած է Հայաստանի արտաքին գործոց նախարարը որ Պրիւքսէլի մէջ կը մասնակցէր ԵԱՀԿ-ի նախարարական խորհուրդի նիստին:

«Հենց որ մենք համաձայնագիր մշակենք, մենք կը թեւակոխենք երկրորդ փուլը, որտեղ կարող ենք նոր հիմնախնդիրներ յառաջ յայտնուել, որովհետեւ մանրամասնների քննարկումը երբեմն աւելի բարդ է, քան սկզբունքները», - աւելցուցած է Վարդան Օսկանեան:

Իր կարգին ԵԱՀԿ-ն նախագահող Պելճիքայի արտաքին գործոց նախարար Քարել Դէ Գուխտ կարծիք յայտնած է, որ յաջորդ տարի Ղարաբաղի հարցի լուծումը տեսանելի է:

«Մենք իսկապէս էական յառաջընթաց արձանագրած ենք, եթէ ոչ ճեղքում: Ակնյայտ է, որ երկու երկրներու միջեւ վստահութիւնը մեծապէս աճած է», - ըսած է Քարել Դէ Գուխտ:

Ս.Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՒԱԳ ԶԻՊԱՏՈՍ ԱՐՄԵՆ ԼԻԼՈՅԵԱՆԻՆ



Ձախէն աջ Տօթթ. Ա. Գազանեան, աւագ հիւպատոս Արմէն Լիլոյեան, Գարրիէլ Մոլոյեան եւ Ստեփան Յովակիմեան

Լոս Անճելոսի մօտ Հայաստանի Հանրապետութեան նորանշանակ աւագ հիւպատոս Տօթթ. Արմէն Լիլոյեանի նոր պաշտօնը շնորհաւորելու համար Ուրբաթ, Դեկտեմբեր 9-ին հիւպատոսարան այցելեց Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի

չրջանը ներկայացնող պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին Գաբրիէլ Մոլոյեան, Տօթթ. Արշակ Գազանեան եւ Ստեփան Յովակիմեան:

Շարք էջ 4

ԱՐԺԱՆԹԻՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎԱԵՐԱՑՈՒՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՕՐԻՆԱԳԻԾ

Արժանթինի Խորհրդարանը հաստատեց օրինագիծ մը, որով համաձայն Ապրիլ 24-ը կը հռչակուի ժողովուրդներու միջեւ հանդուրժողականութեան եւ յարգանքի օր՝ ի յիշատակ հայ ժողովուրդի Յեղապանութեան: Օրինագիծին ի նպաստ քուէարկած է 175 պատգամաւոր, 2-ը ձեռնպահ մնացած են:

«Ազատութիւն» ռատիոկայանի թղթակից Տիէկօ Գարամանուկեան Պուէնոս Այրէսէն կը տեղեկացնէ, որ օրինագիծը թոյլ կու տայ հայազգի պետական պաշտօնեաներուն Ապրիլ 24-ին բացակայելու աշխատանքէն՝ Յեղապանութեան զօհներու յիշատակին նուիրուած միջոցառումներուն մասնակցելու նպատակով: Հայազգի ուսանողներուն նոյնպէս, թոյլ կը տրուի այդ օրը բացակայելու դասերէն:

Օրինագիծի հեղինակը՝ Արժանթինի նախկին արտաքին գործոց նախարար Ռաֆայէլ Պիւլսա, որը ժամանակին այցելած է Հայաստան, շեշտած է, որ Հայոց Յեղապանութիւնը «մարդկութեան դէմ ոճիր է»:

Օրինագիծը, որու քուէարկութիւնը երկար ժամանակէ կը յետաձգուէր թրքական լոպպիի ջանքերուն շնորհիւ, տակաւին պէտք է հաստատուի երկրի Մերակոյտին կողմէ:

ՑԱՒԱՑԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԶԻՊԱՏՈՍԱՐԱՆ

Լոս Անճելոսի մօտ Լիբանանի աւագ հիւպատոսութիւնը Լիբանանի անկախութեան տարեդարձի տօնախմբութիւնը չնշած ըլլալով՝ անոր փոխարէն ցաւակցական այցելութիւններ սկսաւ ընդունել Շէյխ Փիէն ձեմայէլ մահուան առթիւ:

Այս կապակցութեամբ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան Արեւմտեան Ամերիկայի վարիչ մարմինը ներկայացնող պատուիրակութիւն մը անցեալ երեքշաբթի, ցաւակցական այցելութիւն մը տուաւ եւ իր վշտակցութիւնները յայտնեց Լիբանանի գլխաւոր հիւպատոս Շարպէլ Ուսայէին, արդիւնաբերութեան նախարար Շէյխ Փիէն ձեմայէլի անարգ ոճիրով մը սպանութեան առթիւ:

Պատուիրակութիւնն իր ցաւակցութիւնները արձանագրեց նաեւ յատուկ այս նպատակին համար պատրաստուած սպոյ մատենանին մէջ:

ՎԱՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

ՕՐԵՆՔՈՎ ՊԱՐՏԱԴՐՈՒՈՂ ԱՆՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Երեւանեան վերջին օրերի խրոնիկան ցոյց տուեց, որ հանրութեանն անհնար է պարտադրել յարգել կարգն ու օրէնքը, եթէ երկրում ստեղծուած չեն օրէնքով ու կարգով ապրելու երաշխիքներ: Երթուղայիններին կանգառում կայանելու պարտադրանքը ակնյայտօրէն իրեն չի արդարացնում, քանի որ կանգառներում առաջանում են անասելի կուտակումներ, այնպէս, որ նոյնիսկ ոստիկանները, որ հսկում են երթեւեկը եւ կանգառումի գործընթացը, այս կամ այն վարորդին կանգնելու կամ շարժուելու հրամաններ են տալիս դէմքի այնպիսի արտայայտութեամբ, որն ակնյայտ է դարձնում՝ իրենք էլ հասկանում են իրենց հրահանգների անհեթեթութիւնը: Կասկածից վեր է, որ ոստիկաններին այդ բարդ յանձնարարութիւնը տուած իշխանութիւնն էլ գիտակցում է, որ արդիւնքը լինելու է չնչին եւ իրականում երթեւեկութիւնը չի կարգաւորուելու, քաղաքացիները չեն դառնալու կարգապահ եւ վարորդներն էլ չեն ենթարկուելու երթեւեկութեան գրուած կանոններին: Բանն այն է, որ հասարակութեան մտածողութիւնը հակուած է դէպի կարգազանցութիւն, եւ առանց մտածողութեան փոփոխութեան անհնարին է հասնել իրավիճակի էական փոփոխութեան: Խնդիրն այն է, որ կարգով ապրելու համար մտածողութիւնը խիստ անբաւարար բաղադրիչ է: Կարգը պահանջում է իրացման ռեսուրս, ինչը ամենեւին չի սահմանափակում մտածելակերպով եւ աշխարհընկալմամբ: Խօսքը շատ կոնկրետ նիւթական ռեսուրսի մասին է: Չկայ մի օրինակներ երկիր, որը աղքատ լինի եւ չկայ մի հարուստ երկիր, ուր տիրի անօրինականութիւնը: Աղքատ եւ հարուստ հասկացութիւններն այս պարագայում չեն վերաբերում գուտ հանքահումքային հարստութեանը, խօսքը քաղաքացիների հարստութեան, բարեկեցութեան մասին է:

Իհարկէ, հարց է առաջանում, թէ հարստութեամբ է հնարաւոր հասնել օրինականութեան, թէ օրինականութիւնն է հարստութեան բանալին: Թերեւս դա շատ նման է հաւի ու ձուռի պատմութեանը, որի պատասխանը գտնելու բոլոր փորձերը միմիայն խորացնում են խնդիրը, եւ հարցն այդպէս էլ մնում է չլուծուած ու խորացնում է ընդամենը վիճաբանութիւնը: Բանն այն է, որ կարելի է առանց օրինականութեան հասնել հարստութեան, բայց հարստութիւնը առանց օրինականութեան պահպանելը գրեթէ անհնարին է: Ինչքան էլ որ դա յաջողուի, միեւնոյն է կրում է ժամանակաւոր բնույթ եւ չի ունենում որեւէ յստակ երաշխիք: Նոյն կերպ կարելի է առանց ընդհանուր բարեկեցութեան ապահովման հասնել հասարակութեան մէջ օրինականութեան գերակայութեանը, բայց դա պահելն արդէն անհնարին է, եթէ դա չի ապահովուում կոնկրետ նիւթական հենքով: Այդպէս կարգապահութիւնը ի վերջոյ հանգեցնում է աւելորդութեան զգացման, եւ մարդիկ նախընտրում են կարգազանցութիւնը, որպէսզի հասնեն բարեկեցութեան: Թերեւս իրատեսական է այն, որ պէտք է հաւասարապէս աշխատել թէ հանրութեան բարեկեցութեան ապահովման եւ թէ երկրում օրինականութեան հաս-

տատման ուղղութեամբ: Եթէ խախտում է համամասնութիւնը, ապա առաջանում է մի վիճակ, երբ արդէն փաստացի կարեւոր է, թէ յօգուտ որ բաղադրիչն է համամասնութիւնը խառնուել:

Իշխանութիւնը փորձում է քաղաքացիներին կարգի ու օրէնքի վարժեցնել, ներողութիւն համար, երբ ինքը չի յարգում այդ կարգն ու օրէնքը եւ դրանով ցոյց է տալիս, որ բարեկեցիկ ապրելու համար պէտք է օրէնքը եւ կարգը անտեսել:

Հայաստանում ներկայում այդ վիճակն է: Իշխանութիւնը փորձում է քաղաքացիներին կարգի ու օրէնքի վարժեցնել, ներողութիւն այդ բառի համար, երբ ինքը չի յարգում այդ կարգն ու օրէնքը եւ դրանով ցոյց է տալիս, որ բարեկեցիկ ապրելու համար պէտք է օրէնքը եւ կարգը անտեսել: Սակայն դա գուցէ այդքան էլ էական չլինէր, եթէ քաղաքացիների համար գոնէ ստեղծուէին կարգով ու օրէնքով ապրելու բաւարար պայմաններ: Նոյն երթեւեկութեան պարագայում, քաղաքացիներն ուղղակի ստիպուած են խախտել կարգը, որովհետեւ կենաց ու մահու պայքար են մղում երթուղային տաքսի մտնելիս գոնէ յաջողակների հնգերորդութիւնը: Այդ իրավիճակում կոյրին էլ պարզ է, որ բոլորը երանի են տալու այն ժամանակին, երբ կարող էին երթուղային նստել կամ իջնել որտեղ որ յարմար լինէր, նոյնը նաեւ վարորդները երանի են տալիս, որ ցանկացած տեղ կարողանան կայանել: Եւ հենց այդ մտայնութիւնն է իշխանութեան մօտ կարգուկանոնի սրուած զգացման այս յանկարծակի դրսեւորման պատճառը: Ահա թէ ինչու ոչինչ չի արւում խնդրի համալիր լուծման ուղղութեամբ, այլ ընդամենը կատարում է նեղացում մի քայլ, որը ակնյայտօրէն չի տալու իր արդիւնքը: Եւ դա գիտեն նաեւ դրա նախաձեռնողները՝ լինի դա քաղաքացին, թէ կենտրոնական իշխանութիւն: Գիտեն, բայց անում են, որովհետեւ դրա նպատակը բոլորովին այլ է՝ ստեղծել մի վիճակ, երբ քաղաքացիները զգալի նեղութիւն կրեն օրինականութեան հաստատումից եւ սկսեն բարձրաձայն դժգոհել, որ իշխանութիւնը փորձում է կարգ ու կանոն ապահովել: Այդպիսով իշխանութիւնը ստանում է երկրում անօրինականութեան մթնոլորտի դէմ ոչինչ չանելու հիանալի արդարացում, ինչպէս նաեւ հանրային գիտակցութեան մէջ արդէն առաւել գործնական միջոցով է խորացնում անօրինական կեանքի հակուածութիւնը, անօրինականութեամբ հարստացած վերնախաւին օժտելով բարոյական իրաւունքով: Իսկ այդ նպատակին հասնելու համար շատ բան պէտք է՝ պէտք է մարդկանց զրկել նիւթից եւ օրէնք պարտադրել:

ԶԷՅՄՍ ՅԱԿՈՒԲԱՆ «ԼՐԱԳԻՐ»

ԹԱԼԱՆԸ՝ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ

Որ իշխանութիւնների միակ մտահոգութիւնը լափելն է՝ վաղուց որեւէ մէկի մէջ կասկած չի յարուցում: Նախընտրական շրջանում առանձին «ուժանտիկ» դրսեւորումներ, իհարկէ, կարող են լինել: Ասենք՝ Սերժ Սարգսեանը կարող է որտեղից որտեղ հայթայթել Անդրանիկի թուրը ու դրա շուրջ մի ամբողջ թամաշա սարքել՝ գաւառական թատրոնի դերասանի խեղճուկը արտիստիկամով թուրը ձեռքին պոզաներ ընդունելով տեսախցիկների առջեւ: Բայց փաստը կը մնայ փաստ՝ եթէ երկրի ղեկավարները բոժժի հոգեբանութիւն ունենան, ազգային հերոսի թուրն էլ արտասահմանում կը յայտնուի: Ու խնդիրը ոչ թէ մաքանենգ բենզինի փողերով այդ թուրը հայրենիք վերադարձնելն է, այլ այն, որ բացառուի բոժժի հոգեբանութեամբ երկիր ղեկավարելը: Թէ չէ ինչի՞ նման է՝ դարասկզբի հերոսի թուրը գնում է այն փողերով, որոնք վաստակուել են դարավերջի հերոսի պանթութիւնից յետոյ ձեռք բերուած ոլորտների գերհասոյթներով:

Այս իշխանութիւնները շատ լաւ գիտեն օդից փող սարքելու ձեւը, նախապէս գիտեն, թէ մի քանի ամիս յետոյ որ ոլորտն է կանոնաւարձելու»

Ինչեւէ: Լափելը՝ լափել, բայց այս իշխանութիւնները նաեւ թալանածը «կոմֆորտով» վայելելու խնդիր ունեն: Բանն այն է, որ երեւանի քաղաքապետ Երուանդ Զախարեանն, օրինակ, բաւականին ախմախ վիճակում է յայտնուել: Սկզբում Երեւանի կենտրոնը թիզ առ թիզ վաճառել է «էլիտար» շէնքերի կառուցման համար, յետոյ թիզ առ թիզ վաճառել է կենտրոնի մայթերը, ու վերջում յանկարծ պարզուել է, որ Երեւանի կենտրոնում ապրել հնարաւոր չէ. փողոցներում անընդհատ խցանումներ են, ու «գոլդ» համարները չեն օգնի: Ի՞նչ անել: Իշխանութիւնները երկար-բարակ մտածել ու ելքը գտել են: Պէտք է կենտրոնից հանել երթուղային տաքսիները: Բա իհարկէ, երթուղայինը «բոժժերի» տրանսպորտն է, իսկ «բոժժերը» քաղաքի կենտրոնում գործ չունեն: Կենտրոնը կիրքովաբաղցիների համար է, իսկ նրանք, որպէս կանոն, սեփական աւտոմեքենաներ ունեն եւ «ներվիչատ» են լինում երթուղայինների պատճառով: Համ էլ՝ ձեռքի հետ երթուղային գծերի վերաբաշխում կը լինի, արանքում փողից-բանից կ'աշխատեն:

Փաստօրէն, Երուանդ Զախարեանը Երեւանի կենտրոնում գեղջիների համար ռեզերվացիա է ստեղծում: Փայլուն տրամաբանութիւն է, չէ՞, սկզբում գյուղամայրի նման աւերում եւ կենտրոնը, յետոյ հասկանում եւս, որ չիմարութիւն ես արել, ու յաջորդ չիմարութիւնն ես անում... Բայց չկարծէք, թէ չիմարութիւնները սրանով աւարտուելու են: Գեղցու «կայֆը» հո միայն ջիպքէլը չի: Հաճոյքը լիակատար է լինում միայն այն դէպքում, եթէ դու ջիպ ես քշում, իսկ միւսները ոտքով են քայլում: Այնպէս որ՝ առաջիկայում իշխանութիւնները նաեւ տաքսի-սերվիսներն են «կանոնակարգելու»: Մի քիչ լիցենզաւորման կարգը կը խստացնեն, մի քիչ հարկերը կը բարձրացնեն, եւ արդիւնքում կը հասնեն իրենց մուրազին: Այսինքն՝ «նալոգների» ընդհանուր ծաւալը

կը մնայ նոյնը, բայց մեքենաների թիւը կը պակասի, ոտքով քայլողների թիւը կը մեծանայ, ու կիրովաբաղցիների հաճոյքը լիակատար կը լինի: Յետոյ ներմուծուող աւտոմեքենաների համար սահմանուած մաքսատուրքերը կը մեծացնեն, որպէսզի ամէն «բոժժ» մեքենայ չգնի: Խնդիրն, իհարկէ, միայն «կոմֆորտով» ապրելը չէ: Այս իշխանութիւնները շատ լաւ գիտեն օդից փող սարքելու ձեւը, եւ քանի որ իրենք նախապէս գիտեն, թէ մի քանի ամիս յետոյ որ ոլորտն է կանոնակարգելու», նախօրոք լաւ նախապատրաստում են դրան: Ասենք՝ նախապէս «Վոլգա» աւտոմեքենաներ են բերում, որպէսզի մի քանի ամիս անց որոշում ընդունեն, որի համաձայն՝ գազ կարելի է տեղադրել միայն «ուսուր» ունեցող աւտոմեքենաների վրայ (այսինքն՝ միայն «Վոլգաների» վրայ): Ճիշդ այդպէս էր վարում նաեւ դոմինիկեան բռնապետ Տրուխիլյոն. սկզբում նա գնեց երկրի միակ ներկ արտադրող գործարանը, իսկ յետոյ օրէնք հռչակեց, որի համաձայն բոլորը պարտաւոր են առնուազն տարին երկու անգամ ծալրից ծալր ներկել իրենց տները: Ուշագրաւն այն է, որ իշխանութիւնները, որպէս կանոն, իրենց այս քայլերը բացատրում են «ժողովրդի համար մտահոգութեամբ»: Յունուարի 1-ից էլ տարադրամի փոխանակման կէտերի մեծ մասը փակուելու է, որովհետեւ «անվտանգութեան միջոցառումները» պատշաճ մակարդակի վրայ չեն լինելու: Զարմանալի տրամաբանութիւն է, չէ՞. բանդիտիզմն ահաւոր չափերի է հասել, իսկ իշխանութիւնները, բանդիտիզմի դէմ պայքարելու փոխարէն, չենջերն են փակում: Որպէսզի կողպուտար դէպքերը թիչ լինեն:

«ՉՈՐՐՈՐԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱՎԱՆ ԿԱԶՄ՝
 ՍԱՅԱԹ ԹՈՒԹՃԵԱՆ
 ՎԱԶԳԵՆ ԽՈՍԱՆՃԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՊԻԻԹԵԱՆ

Յեռ. (626) 797-7680
 Ֆաքս. (626) 797- 6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social
 Democratic Hunchakian Party of
 Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second
 Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail),
 \$125.00 (Air Mail).
 All payments must be made in
 US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid
 at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԸՆԿ-Գ ԽԱԽՏՈՒՄ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Մարդու իրաւունքները- 96» կուսակցութեան նախագահ Ռուբէն Թորոսեանը դիմել է վարչապետ, ՀՀ նախագահ Անդրանիկ Մարգարեանին՝ մատնանշելով նրա դեկավարած կուսակցութեան օրինախախտումները:

«Մեզ հասած տեղեկութիւններով, օրեր առաջ, Երեւանի Կենտրոն համայնքի ղեկավարը անց է կացրել համայնքի բնակիչների ներկայացուցիչների (լիազօրների) հաւաք, որում քննարկուել են նաեւ կուսակցական (ՀՀԿ) խնդիրներ:

Աւելին, քննարկմանը մասնակցել են նաեւ ՀՀԿ ակտիվիստներ, որոնք հիմնականում հանդէս են եկել ՀՀԿ հետ համագործակցութեան քարոզչութեամբ:

Այսինքն, համայնքի ղեկավար - ՀՀԿ անդամը, կոպտօրէն խախտելով «Կուսակցութիւնների մասին» ՀՀ օրէնքի 10-րդ յօդուածի պահանջները, իր պաշտօնական դիրքն օգտագործել է յօգուտ կուսակցական շահերի:

Առաջարկում ենք միջոցներ



Մարգարու իրաւունքներ- 96» կուսակցութեան նախագահ Ռուբէն Թորոսեան

ձեռնարկել պատասխանատուութեան կանչելու սոցն հարցով օրէնքի ենթադրեալ խախտողներին, ինչպէս նաեւ, բացատրական աշխատանքներ տանել ՀՀԿ անդամ պաշտօնական անձանց շրջանում, «Կուսակցութիւնների մասին» ՀՀ օրէնքի 10-րդ յօդուածի պահանջների անվերապահ կատարման ուղղութեամբ», - ասում է նամակում:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ ԵՐԱԶԱԾ ՆԱԽԱԳԱՐՆ Է

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Մենք աշխատել ենք ստեղծել փաստաթուղթ, որը բխում է մեր իրականութիւնից եւ պատասխանում է այն բոլոր հարցերին, որոնք ծառայում են ՀՀ-ի առաջ», - Դեկտեմբեր 4-ին «Ուրբաթ» ակումբում ՀՀ Ազգային անվտանգութեան ռազմավարութեան նախագծի վերաբերեալ իր տեսակէտը յայտնեց Անվտանգութեան գծով ՀՀ նախագահի խորհրդական Գառնիկ Իսագուլեանը:

Նախագահի խորհրդականն օգտուելով աւելի շնորհակալութիւն յայտնեց ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանին: «Պաշտպանութեան նախարարը, որ նախագիծը մշակող յանձնաժողովի նախագահն է, հենց առաջին օրը դրեց բաց աշխատելու խնդիրը: Բոլորը պէտք է իրենց մասնակցութիւնը բերեն փաստաթղթի մշակմանն ու ընդունմանը եւ, կարծում եմ, որ այդ հանգամանքն ու փաստը յաջողուեց», - նշեց պարոն Իսագուլեանը: ՀՀ ԱԱ ռազմավարութեան

նախագծից պարոն Իսագուլեանը տեղափոխուեց քաղաքական ոլորտ եւ մէկ անգամ եւս պնդեց, որ ՀՀ նախագահի իր նախընտրելի թեկնածուն Սերժ Սարգսեանն է: Յատկապէս վերջին շրջանում տարաբնույթ ոլորտներում՝ շախմատ, ջրագծի բացում, բանակ, անվտանգութեան խորհուրդ եւ այլն: Սերժ Սարգսեանի ակտիվութեան կապակցութեամբ, այսօր լրագրողները նախագահի խորհրդականից փորձեցինք պարզել, արդեօ՞ք որեւէ ոլորտ կորուստ չի կրել. «Դա մենք պէտք է ողջունենք: Եթէ որեւէ տեղ ձախողի, ապա կարող էք ասել: Ի պատիւ իրեն բոլոր այն բնագաւառներում, որտեղ նա պատասխանատուութիւն է ստանձնել, արդիւնքները շօշափելի են եւ ակնառու»:

Ասուլիսի աւարտին պարոն Իսագուլեանը յայտնեց, որ մասնակցելու է առաջիկայ ընտրութիւններին եւ, բնականաբար, ջանք չի խնայելու իր նախընտրած նախագահի թեկնածուին՝ Սերժ Սարգսեանին աջակցելու համար:

«ԸԱՅ ԿԱՄԱԻՐԱԿԱՆՆԵՐԻ ԸԱՄԱԽՄԲՄԱՆ» ՆԱԽԱԶԵՆՈՂ ԽՄԲԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Մենք՝ Արցախեան ազատամարտի մասնակիցներս, գիտակցում ենք Արցախի շուրջ զարգացումների արդիւնքում հարեւնիքի ազատագրութեամբ տարածքների յանձնման սպառնալիքը, դրանով իսկ մեզ պարտադրուած պատերազմում հայոց լաւագոյն գաւակների նահատակութեան, մեր ժողովրդի բազում գրկանքների եւ տառապանքի գնով ձեռք բերուած յաղթանակի իմաստազրկման վտանգը:

Խորը վրդովմունքով դատապարտում ենք հայ հանրութեան պառակտման եւ բարոյալքման, մի խումբ անձանց կողմից ազգային հարստութեան թալանի, սոցիալական ծայրայեղ բեւեռացման, համատարած աղքատութեան, ժողովրդի նկատմամբ բռնութիւնների կիրառման, օտարամոլութեան, գանգ-

ուածային արտագաղթի, մեր ազգային հոլթեանը եւ հայոց անկախ պետականութեան անյարիր միւս բոլոր երեւոյթները: Ամօթալի է, որ այս երեւոյթները յաջորդել են 1988թ ազգային զարթօնքին: Շեշտում ենք, որ դրանք կատարուել են հայոց յաղթանակը դարբնած ազատամարտիկներին անընդհատ պառակտելու արդիւնքում: Համոզուած ենք, որ այս ամէնի պահպանումը չլի է աղետալի հետեւանքներով:

Մենք գիտակցում ենք, որ Հայրենիքում տիրող վիճակով մտահոգ հայրդիւնների հաւաքական ջանքերով է միայն հնարաւոր ժողովրդին պաշտպանել արտաքին սպառնալիքներից, ներքին ոտնձգութիւններից, դիմակայել գալիք մարտահրաւերներին, իրականացնել հերոս նահատակների երազանքը, կեր-

ԱՐԱՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ.- «ՈՒՋՈՒՄ ԵՄ ԱՆԿԱՆ ՆԱԽԱԳԱՐ ԴԱՌՆԱԼ»

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ուզում եմ անկախ նախագահ դառնալ», - Դեկտեմբեր 4-ին «Ուրբաթ» ակումբում յայտարարեց «Նոր ժամանակներ» կուսակցութեան առաջնորդ Արամ Կարապետեանը: Իսկ անկախ ասելով, նա նկատի ունի ֆինանսական անկախութիւն, ինչը՝ իր իսկ հաւաստիացումներով, մինչ օրս նա ունի:

Այնուամենայնիւ նա դէմ է չի ինի ֆինանսական աջակցութեան: Սակայն լրագրողների թուարկած մի շարք գործիչներից եւ ոչ մէկի աջակցութիւնը նրա համար ընդունելի չեղաւ. «Կայ նորմալ աշխատող միջին խաւ, որ եթէ ինձ յաջողութիւն իշխանութիւն գալ, այդ խաւը կ'ուզենայինք, որ շարունակէին իրենց աշխատանքը»:

Իր ռուսամէտ քաղաքականութեամբ յայտնի Արամ Կարապետեանն այսօր էլ չէր ջանցեց հայ-ռուսական յարաբերութիւնները. «Մեր ազգային տրագեդիան նրանում է, որ մեր մէջ սկսել է գործել մի լիցիտներական մտածելակերպ: Երբ իրեն պէտք է՝ ճիշդ է, երբ իրեն պէտք է՝ ճիշդ է: Եթէ բազան

չլինէր, Հայաստանը չէր յաղթելու Ղարաբաղեան շարժման ժամանակ: Ասում է մարդ, որը Մոսկուայում քայլել է»: Արամ Կարապետեանի կարծիքով քաղաքական գործիչների 99 տոկոսը արտաքին դաշտում համարուում են բոմբ. «Որովհետեւ երբ իրենց պէտք է, ցանկացած դաշտում կարող են յայտնուել: Մարդը կարող է ասել Ռուսաստանի հետ մետալ ստանալուց մենք ախպեր ենք, յաջորդ օրը ասի ՆԱՏՕ-ի մէջ մտնելը մեր պրիարիտետն է: Մօտեցումները պէտք է լինի տրամաբանութեան սահմանում»:

Իսկ Ռուսաստանում հայերի սպանութիւնների վերաբերեալ «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահը գտնում է, որ դա ինչ որ ձեւով ուղղորդում է քրէական աշխարհի կողմից. «Նպատակը մէկն է. դրանով վատթարանում է ռուս-հայկական յարաբերութիւնները: Ու՞մ է ձեռնտու. մաֆիային, որը փող է աշխատում, եւ այն ուժերին, որոնք կ'ուզենային Հայաստանը Ռուսաստանից պրկել»:

«ԱՅԼԵՆՏՐԱՆՔ»-Ը ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԸՆԴՈՒՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՄԵԿՆԱՐԿ

«ԱՋԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Այլընտրանք» հասարակական-քաղաքական նախաձեռնութիւնը յայտարարում է հանրահաւաքների մեկնարկ՝ 2007 թուականի փետրուարի 20-ին:

Նախաձեռնութեան անդամ, «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը Դեկտեմբեր 4-ին կայացած ասուլիսի ժամանակ վստահութիւն յայտնեց, որ մարդիկ կը գան հանրահաւաքների:

«Եթէ նման ռեսուրս մենք չտեսնէինք, նման յայտարարութիւն չէինք ընդունի», - ասաց նա:

«Կարելի է հրապարակում ունենալ 200 հազար հոգի եւ ամէն ինչ անել, որ այդ 200 հազարը դառնայ զրո, եւ կարելի է հրապարակում ունենալ 10 հոգի եւ կարողանալ ամէն ինչ անել, որ այդ 10 հոգին դառնայ 200 հազար», - յայտարարեց Փաշինեանը՝ լաւելելով. - «Յամենայնդէպս, մեր խնդիրը այսօր մենք տեսնում ենք երկրորդի մէջ, եւ մենք համոզուած ենք, որ այդ խնդիրը կը լուծենք»:

«Մեր վճռականութիւնը կը կանխորոշի մեր քաղաքական պայ-

քարի ելքը», - վստահեցնում է «Այլընտրանք»-ը Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիներին յղած կոչում:

Նախաձեռնութիւնն արձանագրում է, որ «բռնատիրութեան եւ անօրինականութեան հաստատման եւ խորացման հետեւանքով Հայաստանի Հանրապետութեան առաջ կանգնած թիւ մէկ խնդիր է դարձել քաղաքացու անազատութիւնն ու անպաշտպանութեանը եւ դրանցից բխող՝ ապագայի անորոշութիւնը»:

«Այլընտրանք»-ը, իր գործունէութեան նպատակը համարելով ապագայի անորոշութեան վերացումը, երկրի քաղաքացու համար արժանապատիւ կեանքի հնարաւորութեան ստեղծումը դրա իրագործման համար «ընդունելի է համարում քաղաքական պայքարի բոլոր ձեւերը»:

«Միայն արմատական քաղաքական գործելակերպն է, որ այս իրավիճակում հնարաւոր կը դարձնի ապագայի առաջարկուող մոդելի հանրայնացումը եւ իշխանութեան վերարտադրութեան կասեցումը», - համոզուած են նախաձեռնութեան ներկայացուցիչները:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 1.5 ՏԱՐԻ ԵՒ ԱՐՏԱՔՈՒՄ

Դեկտեմբեր 4-ին աւարտուել է «Միասնական Չափաք» ժողովրդավարական դաշինքի նախագահութեան անդամ Վահագն Չախալեանի դատավարութիւնը: Յիշեցնենք, որ նա մեղադրուում էր պետական սահմանն ապօրինի հատելու համար: Շիրակի մարզի Առաջին Ատեանի Դատարանը մէկ ու կէս տարի ժամկետով պայմանական պատժազափ որոշեց Վահագն Չախալեանի նկատմամբ: Դատավճռի հրապարակումից քիչ անց՝ Երեւան վերադարձող Չախալեանին կանգնեցրել են Շիրակի ոստիկանութեան աշխատակիցները եւ յայտնել, որ նրան երկրից անմիջապէս արտաքսելու հրաման ունեն, սակայն դրա համար որեւէ իրաւական հիմք չեն ներկայացրել:

տել ազգային պետութիւն, Հայաստանը դարձնել ստեղծագործական ներշնչանքի աղբիւր եւ ամենայն հայոց իղձերի փարոս: Հաւատարիմ մնալով մեր կոչմանը եւ ենթարկուելով պահի հրամայականին, յայտարարում ենք «Հայ Կամաւորականների Համախմբում» իրականացնելու մեր նախաձեռնութեան մասին: Կոչով դիմում ենք բոլոր կամաւորականներին, ինչպէս նաեւ հայրենապաշտ, ոգեղէն առնականութեամբ լեցուն երիտասարդութեանը՝ միանալու ազգօգուտ այս նախաձեռնութեանը: Միասնաբար տէր կանգնենք մեր երկրի ապագային, քանզի նուիրեալների վճռական կամքից կը ծնունեն հայոց վերելքն ու նոր յաղթանակները: «Հայ Կամաւորականների Համախմբում»

ԼՈՒՐԵՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԲԱՐՁՐ ԵՆ ԳՆԱՎԱՏԵԼ ԸԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Հայաստանի եւ Ռուսաստանի վարչապետներ՝ Անդրանիկ Մարգարեան եւ Միխայիլ Ֆրադկով Մոսկուայի հանդիպման ընթացքին

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Ուրբաթ, Դեկտեմբեր 1-ին Ռուսաստանի մայրաքաղաքում տեղի է ունեցել Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարութիւնների ղեկավարների՝ Անդրանիկ Մարգարեանի եւ Միխայիլ Ֆրադկովի գլխավորած պատուիրակութիւնների հանդիպումը, որի ընթացքում քննարկուել է երկկողմ համագործակցութեանը վերաբերող խնդիրների լայն շրջանակ:

Հանդիպումից յետոյ Ռուսաստանի վարչապետը լրագրողներին ասաց, որ բարձր է գնահատում հայ-ռուսական յարաբերութիւնները:

«Մեր առեւտրատնտեսական յարաբերութիւնները արագ զարգանում են: Այսօր մենք քննարկել ենք մի շարք կոնկրետ հարցեր ու ծրագրեր», - ասաց նա՝ չափելով, որ «չատ լաւ» է անցել Հայաստանի տարին Ռուսաստանում եւ «բազմաթիւ գործարար եւ գիտական շփումներից դրական արդիւնքներ, անշուշտ, կը լինեն»:

Անդրադառնալով նախագահ Պուտինի՝ վերջերս արած յայտարարութեանը, թէ «ամօթ է, որ Ռուսաստանն ընդամենը երրորդ տեղում է Հայաստանի տնտեսութեան մէջ ներդրումների հարցում», Ռուսաստանի վարչապետը յոյս յայտնեց, որ իրավիճակը շուտով կը շտկուի՝ բերելով «ԱրմենԱլ»-ի, «Վնէշտորգբանկ»-ի, «Վիմպեկոմ»-ի գործարքների օրինակները:

Ի պատասխան լրագրողներից

«ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԸ ՀԱՏԵՄԱԲԱՐ ՔԻՉ ՓՈՂ ԵՆ ՌԻՂԱՐԿՈՒՄ ՏՈՒՆ՝ ՓՈՐՁԵԼՈՎ ԳՈՐԾ ԲԱՅԵԼ ՌՈՒՄԱՍՏԱՆՈՒՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Ռուսաստանցի վերլուծաբան Արտեմ Տուժանովի գնահատմամբ՝ հայաստանցիները եւ ատրպէյճանցիները համեմատաբար քիչ փող են ուղարկում հայրենիք՝ փորձելով գործ հիմնել Ռուսաստանում եւ մնալ այնտեղ:

«Նովիլէ իզվեստիա» թերթն այսօր գրում է, որ Ռուսաստանից հայրենիք ուղարկուող գումարի ծաւալով առաջին տեղում են ուղարկները՝ երրորդ եւ արմատական նրանք տուն են ուղարկել 355 միլիոն դոլար: Երկրորդ եւ երրորդ տեղերում են տաջիկները եւ ուկրաինացիները:

մէկի՝ վրաստանի տարածքով Հայաստան առաքուող բնական գազի մատակարարումներին վերաբերող հարցին, Ֆրադկովը ասաց, թէ «ռուսաստանեան կողմը մտահոգուած է ռուս-վրացական յարաբերութիւններում ստեղծուած իրավիճակով»:

Ռուսաստանի վարչապետը չափելեց, որ այդ հարցը այսօր մանրամասն չի քննարկուել եւ յոյս յայտնեց, որ «դրա կարիքը չի լինի»:

«Եթէ իրավիճակը վատթարանայ, ապա ռուսաստանեան կողմը օպերատիւ ծառայութիւնների հետ համատեղ ստիպուած կը լինի ձեռնարկել համալիր միջոցառումներ, բայց յուսով եմ, որ գործը դրան չի հասնի», - ասաց Ֆրադկովը:

Հանդիպմանը ընթացքում հայկական կողմը մտահոգութիւն է յայտնել նաեւ վերջին շրջանում Ռուսաստանի Դաշնութիւնում մեր հայրենակիցների նկատմամբ բռնութեան յաճախակի դէպքերի կապակցութեամբ: Ընդգծելով, որ թէեւ այդ գործողութիւններն ուղղուած չեն յատկապէս հայերի դէմ, շեշտուել է, որ այդչէն չի կարելի չընդունել դրանց էթնիկ ուղղուածութիւնը:

Ազգային անհանդուրժողականութեան այլանդակ դրսևերումները բացառելը ՀՀ-ի եւ ՌԴ-ի համար համարուել է երկուստեք պատասխանատուութեան խնդիր, քանզի դրանք յղի են բացասական հետեւանքներով եւ նախորդ սերունդների կուտակած հոգեւոր ներուժի կորստով:

«Սա չի նշանակում, որ հայաստանցիները եւ ատրպէյճանցիները Ռուսաստանում աւելի քիչ են վաստակում: Նրանք տաջիկներից շատ են վաստակում, բայց աշխատում են փողը դուրս հանել, այլ կուտակել այստեղ, որպէսզի բացեն իրենց թէկուզ փոքր բիզնեսը, հիմնաւորուեն Ռուսաստանում եւ դառնան նրա օրինական քաղաքացի», - ասել է «Կորկոն» խորհրդատուական ընկերութեան առաջատար վերլուծաբան Արտեմ Տուժանովը:

Երրորդ եւ արմատական Ռուսաստանից ԱՊՀ-ի երկրներ է փոխանցուել մօտ 2 միլիարդ դոլար:

ՀՈՒՄԻ ՊԱՊԸ ԱՅՑԵԼԵՑ ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:
Հինգշաբթի, Նոյեմբեր 30-ին Հռոմի Բենեդիկտոս 16-րդ Պապը այցելել է Պոլսոյ Հայոց Պատրիարքարան, որտեղ մօտ մէկ ժամ է անցկացրել:



Բենեդիկտոս 16-րդ Պապը եւ Պոլսոյ Հայոց Պատրիարք Մեսրոպ Մուրաֆեան

Հայոց Պատրիարքարանում ոչ Պապը, ոչ պատրիարք Մեսրոպ Մուրաֆեանը «Հայոց ցեղասպանութիւն» կամ «Մեծ եղեռն» բառերը չեն արտասանել՝ իրենց ելույթներում օգտագործելով «հայերի կրած տառապանքներ», «ծանր տարիներ» արտայայտութիւնները:

Իսթանպուլի «Մարմարա» օրաթերթի խմբագիր Ռոբերտ Հատտէճեանը «Ազատութիւն» ռադիոկայանին յայտնեց. - «Պապը դիտել տուեց, որ անցած դարում հայ ժողովուրդը այստեղ տխուր ճանապարհ է անցել՝ առանց շատ մանրամասնելու»:

Պատրիարք Մեսրոպ Մուրաֆեանը նախ գոհունակութիւն է յայտնել Պապի այցելութեան կապակցութեամբ: Նա յիշեցրել է, որ մեծ անցեալ ունեցող Պոլսոյ աթոռը շատ հարուստ յարաբերութիւններ է ու-

նեցել վատիկանի հետ՝ չնայած տխուր շրջաններ եւս եղել են:

«Մարմարա»-ի խմբագրապետի պատմելով՝ Հայոց պատրիարքարանում «հրաշալի» կրօնական արարողութիւն է անցկացուել, որի ընթացքում Հռոմի Պապին հիացրել են հայկական շարականները, երգեցողութիւնը:

Հայոց պատրիարքը Պապին նուիրել է 1820 թուականին հայ ոսկերիչների կողմից պատրաստուած մի սկիւհ, Պապն էլ է սկիւհ նուիրել պատրիարքարանին:

Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՅԱՆՁՆՈՒՄ ՅԱԿՈՒ ԱԻԵՏԻՔԵԱՆԻՆ ԵՒ ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանի հանդիսութիւնների դահլիճում տեղի ունեցաւ շքանշանների յանձնման հանդիսութիւն: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինութեամբ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն բերած իրենց ծառայութիւնների համար պարգևատրուեցին՝ «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Յակոբ Աւետիքեանը՝ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» եւ ԼԵՒՈՆ Սարգսեանը՝ «Սուրբ Ներսէս Շնորհալի» պատուոյ բարձր շքանշաններով:

Յակոբ Աւետիքեանին տրուած կոնդակում ի մասնաւորի ասուում է. «...Շուրջ տասնհինգ տարիներ են անցել ծանր ու դժուարին այն օրերից, երբ Դուք Ձեր գաղափարակից ընկերների հետ հիմնադրեցիք «ԱԶԳ» օրաթերթը: Այսօր ուրախ ենք նշելու, որ «ԱԶԳ»-ը իր

ուրոյն տեղն ունի մեր երկրի լրատուամիջոցների մէջ եւ գնահատուած է բոլոր ընթերցողների կողմից: Թերթը եւ նրա աշխատակիցները շատեր արդարօրէն արժանացել են միջազգային եւ հայրենական տարբեր մրցանակների, իսկ Դուք, որպէս գլխավոր խմբագիր՝ «Մովսէս Խորենացի» պետական բարձր պարգևի»:

ԼԵՒՈՆ Սարգսեանին տրուած Հայրապետական կոնդակում ասուում է. «...Տարիներ շարունակ Դուք ի սպաս էք դնում Ձեր կարողութիւնները՝ յանուն Հայրենի մեր երկրի գորացման ու առաջընթացի եւ հաւատաւոր մեր ժողովրդի բարօրութեան: Երկար տարիներ դիւանագիտական աշխատանք իրականացնելով Սիրիայում, Դուք մեծ աւանդ եք բերել բարեկամ այդ երկրի հետ Հայաստանի յարաբերութիւնների առաւել գորացմանը եւ Հայրենիք Սփիւռք կապերի ամրապնդմանը»:

Ս.Դ. ԸՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԱՒԱԳ ԸԻՊԱՏՈՍ ԱՐՄԵՆ ԼԻՆՈՅԵԱՆԻՆ

Մարտնակուած էջ 1-էն

Շրջանիս վարիչ Մարմնի ատենապետ ընկ. Գաբրիէլ Մուրջեան բարի գալուստ մաղթեց եւ շնորհաւորեց մեծարգոյ հիւպատոսը, որ շուրջ ամիսէ մը ի վեր կը գտնուի նոր պաշտօնին գլուխը: Ան ողջունելով Պրն. Արմէն Լիլոյեանի ներկայութիւնը արիւնքի հայկական մեծագոյն գաղութներէն մէկուն մէջ, յաջողութիւն մաղթեց իր յետագայ ծրագիրներուն:

Այս առթիւ յարգարժան հիւպատոսը մօտէն ծանօթացաւ Հնչակեան կուսակցութեան հովանաւորութիւնը վայելող կառույցներու գործունէութեան:

Իր հերթին Պրն. Ա. Լիլոյեան յայտնեց թէ յառաջիկայ ամիսներուն պիտի ջանայ աւելի մօտէն ծանօթանալ գաղութի հասարակա-

կան տարբեր կազմակերպութիւններուն: Իր սկզբունքն է անաչառ մօտեցում ցոյց տալ բոլորին եւ առաւել սերտացնել Հայրենիք Սփիւռք կապերը:

Շուրջ մէկ ժամ տեւող սոյն հանդիպումը տեղի ունեցաւ սիրալիր, ջերմ եւ անկեղծ մթնոլորտի մէջ:

Նշենք նաեւ որ երիտասարդ դիւանագետ ծնած է 1971ին: Աւարտած է Լոնտոնի համալսարանի քաղաքա-տնտեսագիտութեան բաժանմունքը: Երկու տարի պաշտօնավարած է Մեծն Բրիտանիոյ Հայաստանի դեսպանատան մէջ: Այնուհետեւ Պրն. Արմէն Լիլոյեան Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ ստանձնած է Եւրոպայի բաժնի պատասխանատու պաշտօնը:

Ամուսնացած է եւ ունի երկու զաւակ:

ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆ

ՊԱՊԸ ԻՆՉՈՒ ԹՈՒՐՔԻԱ ԳՆԱՅ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Քաղաքականութեան եւ կրօնքի միջեւ միշտ ալ գոյութիւն ունեցած է սերտ յարաբերութիւն: Բազմատեսակ եւ բարդ բնոյթ ունի այդ յարաբերութիւնը: Տեսականօրէն, մարդկային եւ քաղաքակրթական այս երկու երեւոյթները իրարմէ հիմնովին տարբերելով հանդերձ, նոյն բանի համար մրցումի ելած են: Ինչ է այդ հետապնդուածը: Իր ամենակարճ, եւ վստահաբար, ամենայատակ սահմանումը այն է որ թէ քաղաքականութիւնը եւ թէ կրօնքը որոշապէս կը ձգտին իշխանութեան: Եթէ քաղաքականութիւնը յամառօրէն, եւ երբեմն ալ չիմարօրէն, կը ձգտի երկրային, աշխարհական իշխանութեան, անդին, կրօնքը կը ձգտի երկնային, ոչ աշխարհիկ, բնագանցական իշխանութեան: Հետաքրքրականը այն է որ երկու պարագաներուն ալ, այսինքն թէ քաղաքական եւ թէ կրօնական, իշխանութեան հետամուտ եղողները մարդիկ են, մարդիկ որոնք իշխանութեան կը ձգտին, ոմանք իբրեւ քաղաքագէտներ, իսկ ուրիշներ, իբրեւ կրօնքի հետեւողներ:

Որպէսզի աւելի յստակ դարձնենք այդ երկու հետապնդումներու սերտ «գործակցութիւնը», կ'ուզենք մէջբերել 20րդ դարու մեծ փիլիսոփաներէն, Ալֆրեդ Նորթ Ուայթհեթի մէկ վկայութիւնը, իր մէկ կարեւոր գրքի, «Քաղաքարներու արկածախնդրութիւնը», առաջին նախադասութեան մէջ իսկ: Ուայթհեթ կը գրէ.

«Կրօնքները միշտ ալ լաւ բաներ չեն: Երբեմն շատ վատ բաներ են»: Եւ կ'աւելցնէ.

«Շատ աւելի թիւով պատերազմներ մղուած են կրօնքի համար, քան թէ որեւէ ուրիշ բանի համար»:

ԻՆՉՈՒ ԱՅՍ ՆԱԽԱԲԱՆԸ

Պարզապէս հաստատելու համար որ Հոռովի Պապի նման անձնաւորութեան մը այցելութիւնը ունի թէ քաղաքական եւ թէ կրօնական տարողութիւն: Վատիկանի ներկայ գահակալին նախորդը, ձոն Փոլ 22, բազմաթիւ այցելութիւններ տուաւ աշխարհի տարբեր երկիրներէն ներս, բոլորն ալ բարեացակամ կերպով ընդունուեցան հիւրընկալ կառավարութեանց կողմէ: Եթէ այդ այցելութիւնները կրօնական-աւետարանական կեղեւ ունէին միջուկը սակայն քաղաքական էր, այսինքն, բարեխաւէ վատիկանի ազդեցութիւնը այդ երկիրներէն ներս, ինչպէս նաեւ կաթոլիկ համայնքի ազդեցութեան աճը քաղաքական գետնի վրայ:

Հոռովի ներկայ գահակալին, Պենետիքի 16 Պապին ցարդ կատարած այցելութիւնները, բացի իր հայրենիք՝ Ֆերմանիա տուած այցելութենէն, երկրորդը, այն որ տեղի ունեցաւ քանի մը օրեր առաջ, դէպի Թուրքիա, որոշապէս քաղաքական, եւ ինդրայարոյց բնոյթ ունէր, կրօնական տարագին տակ: Պապի այցելութեան, Թուրքիա տրուած, հիմնական դրդապատճառը կը հանդիսանար իր մէկ «կաֆը», ձախաւեր արտայայտութիւնը, քանի մը ամիս առաջ, որուն մէջ ինք կը մէջբերէր 4-5 դարեր առաջ, կայսրի մը կարծիքը մուսուլմանական կրօնքին մասին, ընդ որս այս կրօնքը, այսինքն իսլամը, բռնութեան եւ հալածանքի կրօնք մըն էր:

Հարց է թէ, այն ատեն, Պապը ինչ պէտք ունէր նման, անփափկանկատ արտայայտութիւն մը ունենալու, կրօնքի մը մասին, այսինքն իսլամի, յատկապէս այս ժամանակներուն, երբ քրիստոնէութեան եւ իսլամի միջեւ լուրջ ձգտուածութիւն գոյութիւն ունի, թէ քաղաքական եւ թէ կրօնական իմաստներով: Մանաւանդ որ ասկէ դարձեալ ամիսներ առաջ, Տանըմարքայի թերթերէն մէկը Մոհամմէտին մէկ ծաղրանկարը դրած էր: Ասկէ ամբողջ մուսուլմանական ամբոխներ բիրտ ցոյցեր կատարեցին, նոյնիսկ դեսպանատուներու վրայ յարձակումներ տեղի ունեցան: Այս բոլորին ծանօթ ըլլալէն ետք, պապը ինչ պէտք ունէր մէկ ուրիշ աննպաստ եւ քննադատական արտայայտութիւն մը ունենալու իսլամական կրօնքի մասին: Ամէն պարագայի, ինք փորձեց ինքզինք արդարացնել այն իմաստով որ իր ըրածը պարզ մէջբերում մըն էր, եւ թէ ինք չէր բաժնէր այդ տեսակէտը: Այս «խոստովանութիւնը» չհանդարտեցուց գրգռուած գանգուածները, եւ ասոր իբրեւ արդիւնք, պապը որոշեց Թուրքիա այցելել, տեսակ մը ներողութիւն ինդրելու համար իր ըրած «կաֆին»: Հարց է անշուշտ թէ Պապը ինչո՞ւ Թուրքիան ընտրեց: Եթէ ինք իրապէս կ'ուզէր իսլամական աշխարհի տրամադրութիւնը շտկել, կարող էր երթալ այնպիսի իսլամական երկիրներ, որոնք շատ աւելի ներկայացուցչական հանգամանք ունէին, իսլամական իմաստով, քան Թուրքիան, օրինակի համար, Սէուտական Արաբիան, Եգիպտոսը, Ինտոնէզիան, եւ շատ մը ուրիշ երկիրներ որոնք, կրօնական իմաստով, աւելի «բժախնդի» են քան Թուրքիան: Այս վերջինը, Քեմալ Աթաթուրքէն ասդին, աւելի աշխարհական երկիր կը նկատէ ինքզինք, քան

թէ կրօնական: Ուրե՞մն: Պապը ինչո՞ւ Թուրքիան ընտրեց: Իր այցելութեան ընթացքին եղած երեւոյթներէն յստակ դարձաւ թէ ինչո՞ւ Պապը Թուրքիան ընտրեց:

ա. Իր գործած «կաֆը» սրբագրելու համար: Հակառակ անոր որ իր այցելութիւնը տեղի տուաւ իրեն աննպաստ եւ իր այցելութիւնը մերժող արտայայտութեանց, Պապը պնդեց իր որոշումին վրայ, եւ այցելեց Թուրքիա, «ցոյց տալու համար, որ իր ըրած յայտարարութիւնը» իր անձնական կարծիքը չէր, այլ մէկ ուրիշին, դարեր առաջ եղած: Այլ խօսքով, քրիստոնէութեան եւ իսլամի միջեւ անհրաժեշտութիւն կայ, հանդուրժողական եւ հասկացողական տրամադրութեան մը: Եթէ այսքանով բաւարարուէր եղածը, կարելի էր «արդարացնել» գայն: Սակայն Պապի այցելութիւնը Թուրքիա, ստացաւ բոլորովին տարբեր հանգամանք, որ մեզի մտածել տուաւ թէ Պապը յատուկ «գործողութեան» էր Թուրքիա այլ ծրագրերէն հետապնդելու: Այդ ծրագրերէն կարելի չի չել.

բ. Թուրքիա կ'ուզէ մուսուլմանները Եւրոպական Միութենէն ներս: Իր այս դիմումը կը հանդիպի լուրջ դժուարութեանց Եւրոպական Խորհուրդի տարբեր երկիրներու կողմէ, եւ ոչ միայն դժուարութեանց: Շատ մը երկիրներ կը պահանջեն որ Թուրքիա, որ այս այցելութեան առիթով, ներկայացուցաւ իբրեւ «դեմոկրատական պետութիւն», վերանայի եւ փոխէ իր դիրքը երկրի փոքրամասնութեանց վերաբերեալ, յատկապէս քիւրտներու մասին: «Մարդկային իրաւունքներու» հանդէպ Թուրքիոյ ընթացքը ուղղակի լուրջ քննադատութեան ենթարկուած է: Այլ գործնական պահանջներ ալ դրուած են Թուրքիոյ առջեւ, որոնք եթէ չյարգուին դժուար թէ Թուրքիա կարենայ մտնել Եւրոպական Միութիւն:

Փոխանակ Թուրքիոյ իշխանութիւններէն պահանջելու, կամ անոնց թելադրելու որ անհրաժեշտ է «մարդկային իրաւունքներու» հարցը լուծել, որոնց մէջ անշուշտ կայ նաեւ «Հայկական Յեղասպանութեան» ճանաչման հարցը, Պապը «Թուրիստական» այցելութիւններով կը գբաղի, որոնց մէջ Մուսթաֆա Քեմալի յուշարձանին տրուած այցելութիւնը: Այս այցելութիւնը այն տպաւորութիւնը տուաւ որ Պապը, ամերիկացիներու կողմէ, գործողութեան էր, Թուրքիոյ Եւրոպական Միութիւն մուտքը «դիւրացնելու»: Շրջան մը առաջ, նոյնինքն Պապը կը թուէր ընդդիմանալ Թուրքիոյ Եւրոպա մուտքին, մինչդեռ այս այցելութեան կ'առաջարկէր որ

«հասկացողական տիպով» մը հաստատուի Թուրքիոյ եւ Եւրոպայի միջեւ:

գ. Իր այցելութեան ընթացքին, Պապը նաեւ արծարծեց քրիստոնէայ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած երկփեղկումին մասին, 1054 թուականին, կաթոլիկ եւ օրթոտոքս եկեղեցիներու միջեւ: Այս հարցը արդեօք պատշաճ քննարկման առարկայ էր իր այցելութեան ընթացքին, որ տեսակ մը «մեղադատ» մըն էր իր իսլամի հասցէին ըրած յայտարարութեան համար: Ոչ միայն այս, այլ Պապը նաեւ կ'այցելէր հրէական «սինակով» մը, ուր կարծես կ'ուզէր թէ ուրանալ իր հիթլերական անցեալը, եւ թէ այնքան ինդրել, կաթոլիկ եկեղեցւոյ կողմէ, հրէական «հոլոքոստի» համար:

դ. Կայ նաեւ ոչ միայն Թուրքիոյ հայերու այլ ամբողջ հայ ժողովուրդի պարագան: Հասկնալիօրէն, Թուրքիա ապրող 70 հազար հայերը, եւ անոնց Պոլսոյ պատրիարք Մեսրոպ Մուսթաֆեանը, չէին կրնար Յեղասպանութեան հարցը արծարծել Պապին այցելութեան: Յստակ է սակայն որ Պապը ինքը շատ լաւ տեղեակ է Հայոց Յեղասպանութեան մասին, եւ նոյնիսկ եթէ հայերը հասկնալիօրէն անկարող էին այդ մասին խօսելու, Պապը կրնար ինքը ձեւով մը, թէկուզ ընդհանուր կերպով այդ մասին ակնարկութիւն ընել, մանաւանդ որ Եւրոմիութեան պահանջներէն մէկն ալ Թուրքիոյ ճանաչումն է Հայոց Յեղասպանութեան: Պապը նաեւ գիտէր հայերու եւ յոյներու վրայ գործուած ջարդը, նոյնինքն Մուսթաֆա Քեմալի կողմէ: Անոր յուշարձանին տրուած այցելութիւնը տեսակ մը արդարացում կը հանդիսանայ Քեմալի ջարդարող գործունէութեան:

Պապի Թուրքիա այցելութիւնը յստակօրէն քաղաքական խորք ունեցող կրօնական այցելութիւն մըն էր: Թէ որքա՞ն այս այցելութիւնը պիտի չափողի փարատել իր եւ իսլամներու միջեւ թիւրիմացութիւնը, եւ կամ լուծումներ բերել վերջիչեալ հարցերուն, ժամանակը կրնայ ցոյց տալ: Մեր կարծիքը այն է թէ եղած «կաֆի» մը համար, Պապը պէտք չունէր այսքան ինքզինք «նսնմացնելու» մանաւանդ որ իսլամական աշխարհը եւ անոր մոլեռանդ մասսաները շատ ալ տրամադիր չեն թուրք ներկայիս, քրիստոնէութեան հետ լեզու գտնելու: Դարձեալ կը կրկնենք իսլամներու հաճելի թուելու համար Թուրքիոյ ընտրութիւնը Պապին կողմէ սխալ ընտրութիւն մըն էր, եթէ չէր հետապնդեր քաղաքական այլ հարցեր...

ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Now Available RightPlan PPO 40

Featuring PlanScape® Keeping Californians Covered...

The Power of Blue SM

Health coverage for every household member and every household budget. Affordable plans for the whole family.

Blue Cross of California and BC Life & Health Insurance Company are independent licensees of the Blue Cross Association. The Blue Cross name and symbol are registered service marks of the Blue Cross Association.

ԱՆՌԱԺԵՇՏ Է

1975-2005

30th ANNIVERSARY

A.B.A. INSURANCE SERVICES

BEDROS SIAMANTO MARONIAN

818-500-9585 805 East. Broadway, Glendale, CA 91205

ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"

AUTHORIZED AGENT FOR BLUE CROSS OF CALIFORNIA LIC. # 0494056

ԱՂՁԱՅԻՆ

«ԹԲԻԼԻՍԻՆ ՊԵՏՔ Է ՈՒՇԱԴԻՐ ԼԻՆԻ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ»

ՄԻՋԱՂՁԱՅԻՆ ԵՎ ՆԱԺԱՄԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՋԱՄԻԽՔԻ ՄԱՍԻՆ ՁԵԿՈՅՑՈՒՄ ՔՆՆԱԴԱՏՈՒՄ Է ՎՐԱՍԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԹԱԹՈՒԼ ԹԱԿՈՐԵԱՆ

Միջազգային ճգնաժամային խուժուրդ (ՄՃԽ), որը Բրուսելում գործող հեղինակաւոր կազմակերպութիւն է եւ անցեալ տարուայ աշնանը երկու գեկոյց էր պատրաստել Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մասին, Նոյեմբերի 22-ին հրատարակել է նոր գեկոյց՝ այս անգամ Ջաւախքի, աւելի ճիշտ՝ հայհոյ Սամցխէ-Ջաւախք երկրամասի եւ գերագնացապէս ատրպէճանաքնակ Բուսնի-Քարթլիի մասին: Մեզ առաջին հերթին հետաքրքրում է գեկոյցի այն հատուածը, որը վերաբերում է մեր հայրենակիցներին՝ Ջաւախահայութեանը, ուստի աւելի շատ կանդորդաւորաբար գեկոյցի այդ հատուածին:

Ջաւախքի եւ կովկասեան հարցերով փորձագէտ Սերգէյ Մինասեանը պնդում է, որ առաջին անգամ է միջազգային կազմակերպութիւնը անդրադառնում Ջաւախքի խնդրին, ընդ որում՝ Թբիլիսիին յորդորում կատարել այնպիսի քայլեր, որոնք Հայաստանը եւ հայկական կողմը անգամ չէր արել:

Ի՞նչ է գրուած մօտ 30 էջանոց գեկոյցում: Նախապէս ասենք, որ ուսումնասիրութեան ընթացքում ՄՃԽ-ն կեդրոնացել է Վրաստանում ապրող հայերի ու ատրպէճանցիների քաղաքական իրաւունքների վրայ: Սա չափազանց կարեւոր է, որովհետեւ վրաստանի իշխանութիւններն ամէն առիթով հայերի եւ ատրպէճանցիների, ինչպէս նաեւ միւս փոքրամասնութիւնների պահանջները ներկայացնում են սոցիալ-տնտեսական կտրուածքով՝ պնդելով, որ, օրինակ, Ջաւախքում առկայ խնդիրները բնորոշ են նաեւ երկրի միւս վրացաբնակ շրջաններին:

Ներկայացնենք գեկոյցի ամենաուշագրաւ կէտերը: Վրաստանի կառավարութիւնը պէտք է «լուրջ քայլեր ձեռնարկի երկրի էթնիկ հայկական եւ ատրպէճանական տարածքներում հակամարտութիւնների խուսափելու համար»: «Վրաստանը ժողովրդավարական հաստատութիւններ եւ քաղաքացիական ինքնութիւն կառուցող երկիր է, սակայն բնակչութեան 12 տոկոս կազմող հայ եւ ատրպէճանական փոքրամասնութիւնների ներգրաւման գործում վրաստանը լուրջ առաջընթաց չի արձանագրել: Սամցխէ-Ջաւախքում եւ Բուսնի-Քարթլիում, որտեղ նրանք են հիմնականում ապրում, լարուածութիւնն ակնյայտ է: Վերջին երկու տարիներին անցկացուել են ցոյցեր, կան տեղեկութիւններ ուստիկանական բռնութիւնների մասին, տեղի են ունեցել սպանութիւններ: Թէեւ վտանգ չկայ, որ իրավիճակը կարող է Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի պէս սպառնալ վրաստանի տարածքային ամբողջականութեանը, չետազայ հակամարտութիւնի խուսափելու համար Թբիլիսին պէտք է ուշադիր լինի փոքրամասնութիւնների իրաւունքների նկատմամբ, այդ թւում նրանք լեզուի օգտագործման հարցում», - ասում է գեկոյցում:

ՄՃԽ-ի հայաստանեան վեր-

լուծաբան Լեոն Զուրաբեանը, ով գեկոյցը պատրաստելու ընթացքում աշխատել է Ջաւախքում, ասում է. «Սամցխէ-Ջաւախք շրջանում, որտեղ հայերը կազմում են մօտաւորապէս 55 տոկոս, հիմնականում իշխանութեան պաշտօններում գտնուում են վրացիներ եւ ոչ թէ հայեր: Պատճառները շատ են, որոնցից մէկը նաեւ փոքրամասնութիւնների նկատմամբ վրաստանում պատշաճ հանդուրժողականութեան մշակոյթի բացակայութիւնն է: Վրաստանը ազգային փոքրամասնութիւնների հետ երկխօսութեան մեխանիզմ չունի: Ազգային փոքրամասնութիւնները՝ համայնքները, օտարուած են երկրի կեանքից: Ջաւախքի հարցում վրաստանը դիմում է Հայաստանի օգնութեանը: Հարցը լուծուած է կարճատեւ, իսկ խնդիրը խորութեան մէջ պահպանուած է: ՄՃԽ միտումնաւոր չի անդրադարձել սոցիալ-տնտեսական հարցերին, քանի որ առաջնային է քաղաքական եւ քաղաքացիական իրաւունքների հարցում հաւասարութիւնը երկրի բոլոր բնակիչների միջեւ: Ցանկալի է, որ այս հարցերը լուծուեն Թբիլիսի-Ջաւախք հարթութիւնում»:

Զուրաբեանը հարցի լուծման խոչընդոտները երեք հիմնական խմբերի է բաժանում. պետական կառավարման համակարգի եւ համապետական, ինչպէս նաեւ տեղական մակարդակներում ազգային փոքրամասնութիւնների ներկայացուցիչների բացակայութիւնը (այսինքն՝ հայերին պաշտօններ չտալը), կամ խիստ սակաւ ներկայացուածութիւնը, ապակեդրոնացման ոչ բաւարար մակարդակը՝ տեղերին գոնէ մշակութային եւ կրթական ինքնավարութիւն չտալը եւ ազգային փոքրամասնութիւնների՝ վրացերէնին չտիրապետելը:

«Հայերն ու ատրպէճանցիները լաւ ներկայացուած չեն հանրային կեանքի որեւէ բնագաւառում, յատկապէս՝ կառավարութիւնում: Խնդիրը յատկապէս սուր է Բուսնի-Քարթլիի ատրպէճանցիների համար, որտեղ վրացիները գերակշռում են բոլոր կարեւոր պաշտօնները: Ազգային փոքրամասնութիւնների քաղաքական մասնակցութիւնը եւ ներկայացուածութիւնը, որը բանալի է առաւել արդիւնաւէտ ներգրաւման համար, անհանգստացնող չափի փոքր է: Թբիլիսիի եւ փոքրամասնութիւնների միջեւ երկխօսութեան պակասը է՛լ աւելի է ուժեղացնում խտրականութեան եւ օտարացման ընկալումները», - ասում է ՄՃԽ-ի գեկոյցում:

Զուրաբեանը նշում է, որ վրաստանում ապրող հայերի եւ ատրպէճանցիների ինտեգրման համար լուրջ խոչընդոտ է նաեւ լեզուի չիմացութիւնը: Ե՛ւ Ջաւախքում, եւ՛ Բուսնի-Քարթլիում հայերն ու ատրպէճանցիները չեն տիրապետում վրացերէնին, մինչդեռ, վրաստանի օրէնսդրութեան համաձայն, վրացերէնի իմացութիւնը պետական պաշտօն գրադեցնելու համար պարտադիր պայման է:

«Բնական է, որ նման քաղաքականութեան հետեւանքով փոքրամասնութիւնները աւելի շատ են



գրկուած պաշտօններից եւ դուրս մնում քաղաքական կեանքից: Սա շատ լուրջ դժգոհութիւն է առաջացրել», - ասում է Զուրաբեանը:

Հայաստանի վարչապետի խորհրդական Ստեփան Մարգարեանը, ով արմատներով Ջաւախքի ինդիւրներով, ասում է, որ «ոչ ոք վրացերէն չի սովորի մի միջավայրում, ուր վրացերէն չկայ: Վրացերէնի ուսուցիչները գալիս են 95 տոկոս հայերով բնակեցուած Ջաւախք, արագ սովորում հայերէն եւ հեռանում: Վրաստանը չի վստա-

հում Հայաստանին, Ջաւախքը չի վստահում վրաստանին: Ռուս-վրացական յարաբերութիւններից նաեւ Ջաւախքն է տուժում: Տարեկան 30.000 մարդ գնում էր «խոպան», իսկ հիմա Ռուսաստանն այդ մարդկանց վիզա չի տալիս»:

ՄՃԽ-ի գեկոյցում խստօրէն քննադատուած է Միխայիլ Սաակաշվիլու «լեզուական քաղաքականութիւնը». «Փոքրամասնութիւնների ամենամեծ խնդիրը վրացերէնին չտիրապետելն է: Սկսած

Շարք էջ 19

PHOENICIA RESTAURANT TRADITIONAL LIBANESE COISINE

Now Open

Mon-Thur. 11 am to 11 pm

Sun. Noon to 11 pm

Fri. & Sat. 11 am to 2am

Live Entertainment

Koko Hayitian & Belly Dancing Show

Patio Dining

343 N. Central Ave. Glendale, Ca. 91203 e mail: info@phoenicia.us www.phoenicia.us

For Reservations: Tel: 818.956.7800 Fax: 818.956.0320

ՓԱՂՈՒԹԱՅԻՆ

ՍԱՐԿԱԲԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ, ՎԷՆ ՆԱՅՍ



Ձեռնադրութեան տեսարան մը

Կիրակի, Նոյեմբեր 26ին, 2006, Ս. Պետրոս եկեղեցւոյ մէջ, Վէն Նայս, տեղի ունեցաւ Սարկաւագական ձեռնադրութիւն: Օրուան պատարագիչ ու քարոզիչն էր Թեմիս Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան: Յետ Առաւօտեան Ժամերգութեան Հրաշափառի երգեցողութեամբ մուտք գործեց հանդիսապետ Սրբազան Հայրը շքեղ թափօրի մը ընկերակցութեամբ: Պատարագի ընթացքին կիսասարկաւագներ՝ Մկրտիչ Քրտաճիքեան եւ Մաթիոս Աշ ձեռնադրուեցան Սարկաւագ ձեռամբ՝ Գերշ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Աստուածային եւ երկնային հոգեպարար շարականով անոնք իրենց կեանքը նուիրեցին Աստուծոյ եւ եկեղեցւոյ եւ ստացան իշխանու-

թիւնը ընթեռնելու Աւետարանը եւ կատարելու վերաբերումը սրբազան խորհուրդին: Առընթերակաջ եկեղեցականներ՝ Տ. Արշակ Ա. Քհնյ. Խաչատուրեան եւ Տ. Շնորհք Քհնյ. Տէմիրճեան, որոնք նոյն ատեն եղան խարտաւրակներ նորօք ձեռնադրեալ սարկաւագներուն: Սրբազան Հայրը քարոզէն ետք շատ զեղեցիկ սրբանկարներ նուիրեց իւրաքանչիւր ձեռնադրեալ սարկաւագներուն որպէս յուշանուէր եւ ապա փոքրիկ փայտեայ խաչեր նորակազմ փոքրիկներուն երգչախումբի անդամներուն եւ անոնց ղեկավար Սեւակ Տէրտէրեանին: Յետ պատարագի արարողութեան տեղի ունեցաւ փոքրիկ հիւրասիրութիւն մը:

ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՊԱՐԳԵԻ ԱՐՔԵՊՍ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ



photo by Jacob Demirdjian

Հաւատացեալները հաղորդութիւն կը ստանան Պարգեւ Արքեպ. Արքեպ. Մարտիրոսեանէն

Կիրակի, Նոյեմբեր 19ին, Փաստինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին բացառիկ եւ շնորհալի ներկայութիւնը վայելեց Արցախի Թեմի բարեջան Առաջնորդ Տ. Պարգեւ Արքեպ. Մարտիրոսեանի, որ եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. պատարագ մատուցեց եւ քարոզեց: Սրբազան Հօր սպասարկեց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Զաւէն Ա. Քհնյ. Արզումանեան: Յաւարտ Ս. պատարագի Տ. Զաւէն ներկայացուց Սրբազան Հայրը որպէս մեր ժամանակներու քաջարի Առաջնորդը ազատագրուած Արցախի թեմին, որ եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստացած է երջան. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին 1988 թուին, երբ Հայրապետը վերահաստատած էր Արցախի պատմական թեմը, որուն վրայ Առաջնորդ կը կարգէր Պար-

գեւ նորապսակ եպիսկոպոսը: Պարգեւ Արքեպիսկոպոս ծնած է Սուճազիթ 1954 թուին, յաջողութեամբ աւարտած է Ս. էջմիածնի Հոգեւոր ձեմարանը, եւ բարձրագոյն ուսման հետեւած է լեզուագիտութեան ճիւղին մէջ Մոսկուայի Համալսարանին ներս: Ղարաբաղի ինքնավարութեան եւ ապա անկախ հանրապետութեան հաստատման մէջ հայ ազատամարտիկներու կողքին Պարգեւ սրբազան օրինակելի դիրք բռնած, կողքին մնաց միշտ Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան Նախագահին, մարտիկներուն, ինք անձամբ բաժնեկից ըլլալով ճակատի ընդհարումներուն: Սրբազան Հայրը քարոզեց, բնական ունենալով Պողոս Առաքեալի

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ՝ ԼԻՒՍԻ ՍԻԼԱՅԵԱՆԻ «ՕՆՆԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ԴԵՏՔԵՐՈՎ» ԶԱՏՈՐԻՆ

Լիւսի Սիւլահեանի հեղինակած «Օննիկ Սարգիսեանի... Հետքերով» գիրքին շնորհանդէսը տեղի ունեցաւ Հ.Բ.Ը. Միութեան, Ալեք Մանուկեան Կեդրոնի՝ Պոչաճեան սրահին մէջ, Ուրբաթ, Նոյեմբեր 17, երեկոյեան ժամը 8:00ին: Այս առիթով բանախօսելու հրաւիրուած էր, Հ.Բ.Ը.Մ.ի Դարուհի Յովակիմեան վարժարանի տնօրէն՝ «Կամար» թերթի խմբագիր Ժիրայր Դանիէլեանը: Երեկոյին հանդիսավար գրականագէտ Լիլիթ Քէհէեան պատշաճ իր բացման խօսքէն ետք, բեմ հրաւիրեց գլխաւոր բանախօսը: Ժիրայր Դանիէլեան հանգամանօրէն ներկայացուց Օննիկ Սարգիսեան ուսուցիչը, տնօրէնը, գրչի մարդը, մտաւորական, խմբագիրը, որ շատ խորունկ հետք ձգած էր իր աշակերտներուն վրայ: Ժիրայր Դանիէլեան բարձր գնահատեց Լիւսի Սիւլահեանի լուրջ աշխատասիրութիւնը, ի մի հաւաքելու Օննիկ Սարգիսեանի կրթական, մշակութային ու ազգային հակայական ծառայութեան ժառանգութիւնը, հայակերտման սրբազան առաքելութիւնը եւ ամփոփելու հատորի մը մէջ: Լիլիթ Քէհէեան հրաւիրեց Օննիկ Սարգիսեանի աշակերտներէն, Տիարք՝ Վաչէ Սէմէրճեանը, Տօքթ. Կիրակոս Մինասեանը, Փրոֆ. Օշին Քէշիշեանը, որոնք իրենց յուշերուն ընդմէջէն ընդգծեցին Օննիկ Սարգիսեանի բազմաթիւ եւ բազմազան բարեմասնութիւնները: Սիրոյ եւ յարգանքի ալիք մը բարձրացնելով հանդիսատեսի սրտին մէջ: Հանդիսավար Լիլիթ Քէհէեան կարգաց որոշ հատուածներ Օննիկ Սարգիսեանի գրած նամակներէն բացառյալ տեղով անոր գուրթախոսութիւնը: Ան ներկայացուց նաեւ արձա-

Երբ էրեւոնի թանգարանում «որդան կարմիր» աւագանին մօտեցանք, ձեռքդ մտցրիր ջուրն ու մի բուռ կարմիր մանրիկ ու բարալիկ որդեր հանեցիր եւ նորից թափեցիր ջրի մէջ ասելով «Այս անձարակ ջրային անվնաս որդերի մարմնի տրորուած նիւթից կարմիր մնայուն գոյնի ներկ են ստանում, որից օգտուում են նկարիչներն ու գորգագործները եւ գործուած քեղէնի արտադրութեան մէջ: Յետոյ ցոյց տուիր մի շորի կտոր, որը բերուած էր թանգարանի մօտակայքում գտնուող կարմիր բլուրի պեղումներից, բացատրեցիր որ այդ շորի մի մասի մոզ կարմիր գոյնը այս որդերից առաջացած գոյնն է, որը մեզ ընկերակցող թանգարանի պաշտօնէան եւս հաստատեց: Սարգսրապատի պատի փորագրութիւնների մասին եւս բացատրութիւն տուիր որը նոյնպէս հաստատեց բոլորի կողմից: Ջարմանք էիր պատճառում ինձ քո գիտելիքներով, մտածում էի ինչքան բան գիտի եւ այսքան գիտելիքներով ինչքան հանգիստ ու խաղաղ է:

Սիրելի Աւագ քո հանճարով կեանքդ հիմնեցիր եւ հասութեամբ դարձրիր: Քո նկարչական աշխատանոցում դու ունայնութիւնից ինչեր ստեղծեցիր եւ որքան հոգեկան ուրախութիւն ու հրճուանք պարզեցիր երկրպագու դիտողներին, թող քո հոգին լոյսերի մէջ ողորուի:

Սիրելի Աւագ այն ջախջախիչ ու փոթորկայոյզ անմոռաց գործը որ նուիրել էիր Ապրիլ 24ի չիշատակին, որով քո զօրեղ վրձնով եւ հոգուդ գեղեցիկ շունչ տուիր անմահ բանաստեղծ Պարոյր Սեւակի իմաստալի խօսքին, այնքան

հոյակապ եւ այնքան ազդու որ երբ այդ թեւաւոր նկարը ողորկեց Թեհրանի պողոտաների եւ սրահների պատերը, խոցեց մեր ազգի ոխերիմ թշնամու եւ բոլոր անբարեացակամների վատ սրտերը: Նկարում պատկերուած ոճրագործ թուրք ասկեարը մահուան ճիրաններում, հայ ազգի վերածնունդը ներկայացնող վերասին ծլարձակած ճղակոտոր ծառի տակ, Սեւակի անմահ պատգամն է բարձրագոյն հնչեցնում:

Կանք, պիտի լինենք, եւ դեռ շատանանք:

Սիրելի Աւագ ընդմիշտ հեռացած դու անմոռաց վաղեմի ընկեր, դու կաս, կը մնաս, քո անունը ամէն աւիթով քո անմահ ստեղծագործութիւններով, կը չիշուի ժողովրդական բոլոր ձեռնարկներում: Դու մէկն ես ամենաերջանիկներից, քո սիրելի եւ արժանի գաւակներդ ըստ արժանուոյն գնահատեցին քեզ: Դու ժողովրդանուէր էիր, արժանի ամուսին գոհաբերող հայր, ազնիւ ընկեր: Քո պարզ ու սրտաբուխ խօսքը իրականութիւններ էր բացայայտում մարդու համար: Այսօր երկրպագուներդ հո՞ծ բազմութեան ներկայութեամբ լքեցիր մեզ ու միացար հանգուցեալ ընկերներին, նրանք էլ են քեզ սիրում, հիմա էլ մենակ չես սիրելի ընկեր, այդ մենք ենք որ պիտի խոստովանենք: Էլ ո՞ւմ հետ խօսեմ, երբ ընկերներս հեռացան:

ԱՒԱԳ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ 1926-2006

Ա. Հայրապետեանը ծնուել է Թաւրիզում: Ազգային նախակրթարանում սովորելիս գծագրութեան մէջ դրսեւորած ընդունակութիւնները կանխագծում են նրա հետագայ մասնագիտական ուղին: 1941 թուականից շուրջ մէկ

ԳՐԱԿԱՆ

ՓԱՊՈՒՂԻՆ ԿԱՆԹԵՂԸ

Հ. ԼԵՒՈՆ ԶԷՔԻՆ

Մեծ Եղեռնի ողբերգությունների սերունդները գանցող հոգեցնցումին եւ այդ անասելի աղետին հետեւանք՝ հայ եւ թուրք յարաբերութիւններու խրատ անելին մէջ, Ֆեթհիէ Չեթինի այս գրեթէ վտիտ հատորը, կարծէք, կանթեղալոյս մըն է, որ անակնկալօրէն վառեցաւ ելքի դոյզն իսկ նշմար չցուցաբերող այդ միջին փապուղիին մէջ:

Մեծ Եղեռնի յիսնամեակին յաջորդող տասնամեակներու ընթացքին, այդ անխորաչափելի ոճիրին՝ միջազգային իրաւունքի գետնին վրայ ցեղասպանային բնոյթին փաստարկման եւ միջազգային հասարակութեան կողմէ իբր այդ ճանաչման համար մղուած գրեթէ գերմարդկային, հոգեգալար ճիգերը յաճախ այն աստիճան բեւեռեցին, մենակալեցին հայ անհատին եւ հաւաքականութեան մտահայեացքը, ապրումները, հոգեթովումները, կենսոլորտն ու հնարաւորութիւնները, որ աւելի սաստկացուցին, կարծես, քան թէ ամոքեցին աղէտին սերնդափոխային հոգեցնցումը:

Հայկական ճիգերուն եւ միջազգային ճանաչումներուն գուգահեռ, եւ գրեթէ համապատասխան չափերով, թափ ստացող թուրք պետական վարչամեքենային եւ նոր կազմաւորուող թրքական սփիւռքին ժխտապաշտ արշաւն ալ, իր կարգին, յաճախ այն տպաւորութիւնը կը գործէ՝ որ հայկական հոգեցնցումը եւ հայ հոգիին կոտորացող վէրքը դեռ աւելի մորմոքիչ դարձնելու հետամուտ, կիւնիկեան գիտակցութեամբ մը մշակուող ու շահագործող մարտավարութիւն մը կամ, աւելի եւս, ռազմավարութիւն մը կը դառնայ:

Այնպէս կը թուի՝ թէ հարցին այս բաւական նրբատարր երեսակը, առ այժմ, կը վրիպի տակաւին հայ հաւաքական գիտակցութեան մեծամասնային ուշքէն եւ նկատառութենէն, թէ մուտք չէ գործած դեռ այդ գիտակցութեան փորընկալային հասողադաշտէն ներս: Այդ նշմարունակութենէն կը խուսափի մանաւանդ սա փաստը, որ եթէ նոյնիսկ աշխարհի բոլոր կարգերն ու պետութիւնները ճանաչեն հուսկ Հայոց Մեծ Եղեռնը որպէս ցեղասպանութիւն, ըստ ՄԱԿ-ի պայմանագրութեան եզրերուն, բայց եթէ թուրք պետականութիւնը յամառի իր ժխտապաշտ դիրքին մէջ, դարձեալ մեր հոգիին վէրքը կը մնայ, ըստ էութեան, անդարման եւ անբոյժ:

Ինչ որ սակայն առաւել ուշադրութեան առարկայ պէտք է դառնայ այդ ընդհանուր համապատկերին մէջ այն է՝ որ մեր տենդոտ ու սեւեռուն կառչումով «ցեղասպանութիւն» բառին, մեր գիտակցական հասողադաշտէն սկսած է տակաւ, անզգալաբար, սահիլ ու անհետիլ զգայնութիւնը այն իրողութեան՝ որ Հայոց Մեծ Եղեռնին ողբերգութիւնը կ'անդրազանցէ, թէ՛ ծաւալով եւ թէ՛ խորութեամբ, «ցեղասպանութիւն» յղացքին Միացեալ Ազգերու կողմէ բանաձեւուած իրաւաբանական իմացումն ու սահմանումը:

Հողագրկումը, - իմանալով «հող»-ը ո՛չ թէ քաղաքական, այլ մարդաբանական առումով՝ իբր ազգային-հաւաքական մշակոյթի եւ ինքնութեան օրրան, - արմատախլուծը՝ բառին գրեթէ բոլոր հնա-

րաւոր բնավայրային առումներով, եւ հուսկ նոյնինքն այդ հող-բնավայրին իր իսկ պատմական յիշողութենէն դաժան ամայացումը, հաւանօրէն ամենէն դժնդակ երեսներն են Հայոց Մեծ Աղէտին ու Եղեռնին:

Այս դոյզն նկատողութիւնները քանի մը շատ հպանցիկ վրձնահարուածներ են լոկ, որոնք հագիւթէ կ'ուրուագրեն հայ-թուրք յարաբերութիւնները փակակալող միջնորմին էութիւնը:

Այդ միջնորմը պիտի վերանայ, հաւանօրէն ոչ այնքան քանդահարութիւն լողի մը հիմնակործան ընդոտ մէկ հարուածով, այլ գայն աղիւս առ աղիւս փխրող, խարխալող, փոշիացնող անընդատ մրճահարուածներու, թէպէտ երկարաժամկէտ եւ համբերակշռոյթ, բայց յամառ, ակնդէտ մաշեցումով:

Այսօր կարելի է անվարան հաստատել՝ թէ սոյն գործընթացը շղթայագերծած է արդէն կը ծաւալի ու կ'ընդլայնի կեդրոնախոյս ալիքի մը պէս:

Թէ որոնք են կարեւորագոյն հիմնարար, առաջնահերթ դերակատարները այդ գործընթացին՝ յայտնի է արդէն: Լայնախոհ, ազատամիտ, մանաւանդ մարդկային վսեմ սկզբունքներով ու քաղաքացիական խորոխտ, արի կեցուածքով տոգորուած թուրք մտաւորականութիւնն է՝ որ ստանձնած է այդ դերը, ի հեճուկս անուանարկումի, ամբաստանութիւններու, իւրաքանչիւրը իր իսկ անձին վրայ վճարելով իր խիզախումին գինը:

Մեծ Եղեռնի հարցադրութեան նկատմամբ այս տիպի մտաւորականութեան որպէս տիպար չենք կարող չլինել այստեղ, այդ փաղանգին ռահվիրան՝ պայծառայիշատակ Այշէ Նուր Սարըսէօգէն Չարաթոլուն, որ մարդ էակի իրաւունքներուն եւ արժանապատուութեան ի սէր մղած իր պայքարը հուսկ իր կեանքով վճարեց՝ դատակոչի ենթարկուելով մինչեւ իսկ յետ մահու, գերեզմանի ընդերքէն:

Այսօր, նոյն տեսլականներով պատնէշի վրայ մաքառող թուրք յառաջատար մտաւորականներէն մէկն է ներկայ գրքին հեղինակը՝ Ֆեթհիէ Չեթին: Շատ երիտասարդ տարիքին՝ ճաշակած խստագոյն բանտարգելութեան դաժանութիւնը, աւելի իրաւադատ, հաւասարատենչ եւ արդարաբաշխ ընկերութեան մը կերտումին ի ինդիր իր գաղափարական պայքարին համար, պաշտօնով փաստաբար Ֆեթհիէ Չեթինը՝ այսօր մարդկային իրաւանց պաշտպանութեան հարցերով թուրքիոյ ծանօթագոյն դէմքերէն մէկն է:

Գրքին մէջ ներկայացուած պատմութիւնը անձնական կամ ընտանեկան դրուագ մը ներկայացնելէ աւելի՝ կը ստանձնէ համաժաւալ, խորհրդանշային բնութագրում մը, դառնալով պատմութիւնը բազմահագար, թերեւս մէկ, գուցէ եւ երկու հարիւր հազարով չափելի հայ որբուհիներու եւ որբերու բովանդակ սերունդի մը. մէկ ստուար մասը մանկութիւն չունեցած այն սերունդին՝ որ «տեսել է մահը իր աչքերով», բայց որ վերապրեցաւ որպէս թէ լինէր մեռած, ինչպէս շատ յարիւր կերպով կը բնորոշէր ինքը Ֆեթհիէ Չեթին, երբ՝ 9 Նոյեմբեր 2005ին՝ Պատովայի մէջ իր գրքին ներկայացման առթիւ պատմելով իր մեծ մօր Հրանտյշին առեւանգումն ու ան-

ուանափոխութիւնը՝ ըսաւ. «Այդօրը Հրանտյշ մեռաւ, ու նոր անձնաւորութիւն մը՝ Սեհերը ծնաւ»: Պատմութիւն մը, որ թուրքիոյ մէջ թաբու էր մինչեւ մերձաւոր տարիներ, ինչ որ մէկ ուրիշ դժնդակ երեսն է Մեծ Եղեռնին, եւ որ սկսած է, սակայն, տակաւ քանդուելու ուրիշ թաբուներու նման, քանդում՝ որու ուղեյարդարներէն մէկը եղաւ, անկասկած, նաեւ Ֆեթհիէ Չեթինի ներկայ գիրքը, այո վտիտ՝ իր ծաւալով, բայց հուժկու՝ իր պատգամով:

Այս տողերը գրողը համոզուած է, որ եթէ հուսկ օր մը թուրքիոյ քաղաքական հասարակութեան մէջ պիտի կարենայ վերջնականօրէն խորտակուիլ Հայոց Ցեղասպանութեան թաբուն՝ այդ պիտի ըլլայ մեծ մասամբ արդիւնքը Ֆեթհիէ Չեթինի եւ նման այլ մարդկայնախոհ եւ քաջ մտաւորականներու խիզախ ու յամառող աշխատանքին, երբ ասոնց թիւին եւ հեղինակութեան աճը հասնի այնպիսի տարողութիւններու՝ որ կարենայ դաշիլ, եւ հուսկ շարժել թուրք հանրային կարծիքին բազկերակները:

Կարելի չէ այս ուղղութեամբ հիմնուած յոյսեր չմշակել, երբ նման մտաւորականութեան շար-

քերը, գրեթէ օրը օրին, կը բազմանան: Ահա թէ ինչո՛ւ աւելի քան անհրաժեշտ է, հայերուս եւ առհասարակ մարդկային արժէքներու հետամուտ ամէն անձի եւ ամէն հաւաքականութեան համար, գիտնալ ո՛չ միայն տրամախօսել այդ ճայներուն հետ, այլ նաեւ թիկունք կանգնիլ անոնց՝ առանց յուզապաշտ կաշկանդումներու, առանց անամէջ եւ անհեռատես հաշուարկներու, որպէսզի ըլլայ թէ խեղդուին այդ ճայները՝ գիրենք շրջապատող մրրկածուփ ծովուն կլանիչ յորձանքներէն:

Կը պատահի մերթ՝ որ մերազնեայ գրողներ ու մտաւորականներ, դժբախտաբար, աւելի կասկած, հեգնանք կամ խժբժանք ցուցաբերեն անոնց նկատմամբ՝ քան թէ ընդառաջում մտաւորական հանդիպասուութեան: Բաղձալի եւ, անշուշտ, յուսալի է՝ որ Ֆեթհիէ Չեթինի գրքին ներկայ թարգմանութիւնը, Սալբի Գասպարեանի բժախնդիք, սահուն եւ թելադրիչ հայացումով, սատար եւ խթան հանդիսանայ նման հանդիպասուութիւններու, մանաւանդ թէ իրաւորամախօսութեան, եւ իսկապէս դառնայ կանթեղ՝ ներկայի միջին փապուղիին մէջ:

ՍԱՐՈ ԳԻՄՐԵՑԻՆ՝
«ԳԻՄՐՈՒ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՐԴ»
Նոյեմբերի 30-ին Գիւմրու Արուեստների ինստիտուտի դասընթացում տեղի ունեցաւ «ԳԻՄՐՈՒ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՐԴ» կոչումը շնորհող յանձնաժողովի նիստ-քուէարկութիւնը: Յանձնաժողովի միաձայն որոշմամբ 2006 թուականի «ԳԻՄՐՈՒ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՐԴ» ճանաչուեց Լուս Անճելոսի «ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐ» Գրական-Մշակութային Հանդէսի գլխավոր խմբագիր, բանաստեղծ, հրապարակագիր ՍԱՐՈ ԳԻՄՐԵՑԻՆ (ԳԻՈՂԱԿԵԱՆ):
2007թ. Ապրիլին կը կայանայ «ԳԻՄՐՈՒ ՏԱՐՈՒԱՅ ՄԱՐԴ» մետալի եւ հաւաստագրի յանձնման հանդիսաւոր արարողութիւնը Գիւմրի քաղաքում:

ՇԱՂՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ
Հինգշաբթի, Դեկտեմբեր 7ին, երեկոյեան ժամը 7:30ին, Կլէնտէյլի Վէրտուկօ Հիլզ Գառնիթի Գլխալի սրահին մէջ, տեղի պիտի ունենայ քաղաքական հաւաք եւ ժողովրդային քննարկում Ջաւախքի եւ Ջաւախքահայութեան մասին:
Խօսք առնողները պիտի անդրադառնան Ջաւախքի պատմութեան եւ յատկապէս տիրող աշխարհաքաղաքական նոր իրավիճակին, հայաթափման եւ հայ ժողովուրդի բախտորոշ եւ ճակատագրական օրերուն մասին:
Ձեռնարկը նախաձեռնուած է համայնքիս խումբ մը մտահոգ հայերու կողմէ:
Սրահի հասցէն է. 400 West Glenoaks Blvd., Glendale: Սիրով հրաւիրուած է պայքարող հայ ժողովուրդը: Մուտքը ազատ է:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ
Yes, I wish to subscribe to
Massis Weekly
Enclosed a check for (one year) * \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.
Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

ՊԱՏՄԱԿԱՆ

ԴԵՊԻ ԿԱՐՕՏԻ ՃԱՄԲԱՆԵՐ ԴԵՊԻ ԵՐԱՍԽԱԻԱՆ

ՊՕՂՈՍԼԱԳԻՍԵԱՆ

Տրդատ ապաստանած էր եղել Հոռովմէական կայսրութեան արեւելեան մասի Նիկոմիտիա քաղաք, որտեղ տիրապետել էր Հելլեն մշակոյթին ու փիլիսոփայական արուեստին: Սակայն դիւցազնացած Տրդատը համբաւաւոր էր դարձել գինուորական քաջագործութիւններով: Հոռովմը գինական օգնութիւն էր տրամադրել նրան, որ արշաւէր Հայաստան ու տիրանար հօր գահին: Այդ ընթացքում, նրան էին միացել հայ իշխաններ, Կեսարիայից Գրիգորը ներկայացել էր արքային՝ արքունիքում քարտուղարի պաշտօն ստանձնելու: Տրդատի բանակը պարտուել էր եւ նա կրկին ապաստանել էր Հոռովմէացիներին երկիր: Տասներեք տարիներ յետոյ նա Հոռովմէական հսկայ բանակով դարձեւ արշաւել էր Հայաստան պարտութեան մատնել Սասանեաններին ու տիրացել հօր գահին: Գրիգորը նորէն Տրդատի բանակում էր ծառայել եւ իր քարտուղարի հմտութեամբ դարձել արքայի մտերիմը ու խորհրդականը:

Կեսարիա ապաստանած Գրիգորը քրիստոնէական դաստիարակութիւն էր ստացած եղել, իսկ Տրդատի հոգում բնութեան պաշտամունքի, իրենց հողից, իրենց լեռների ձիւնոտ ծաղիկներից յառնած աստուածների հրայրքն էր պոթկում: Անդունդ էր իրենց միջեւ, պիտի բախուէին այդ երկու հաւատքների լուր խորհուրդները, պիտի որոտար երկիրն հայոց, շանթեր պիտի գարկէին, ափսոս որ նրանց կարմիր բոցերում պիտի հրդեհուէին հազարամեակների հնդեւրոպական արիական մշակոյթը, պիտի սպաննէին հին աստուածներին, սակայն անկարող մարելու՝ լոյսի, ծաղիկի, անձրեւաջրերի, ծառի, հողի հայոց պաշտամունքի խորհուրդը:

Յաղթանակի տօն էր, գոհաբանական պաշտամունք էր մատուցւում Երիզա աւանի հայոց դիցամօր՝ Ոսկեծին մայր Անահիտին: Հեթանոսական պաշտամունքից առաջ Գայլ գետի ջրերում արքայական խրախճանք էր Ոսկեծօր պատուին: Այնտեղ էին նաեւ Գրիգորը եւ Խոսրովիդուխտը: Տրդատը գինիով ու հեթանոսական աւիւնով արբեցած, Գրիգորին հրամայել էր ծաղիկով հիւսուած պսակ ձօնել հայոց պաշտած դիցուհուն, սակայն մերժում ստանալով, արքան կանչում է «Օտարական, դու ինչպէս ես յանդգնում չպաշտել այն աստուածը որ ես եմ պաշտում ու հակառակիլ իմ կամքին»: Ձօն մատուցելուց կրկին անգամ հրաժարուելու համար արքան հրամայել էր պատժել նրան, որի մասին վկայել է արքայական ատենադպիր՝ պատմիչ Ագաթանգեղոսը: Պատմիչ, դու հայ ես եղել թէ Կեսարացի Քրիստոնէայ Յոյն, այդքան տանջանք ես յօրինել որ սրբացնէիր նրան, ինչու ես ստել, հայոց արքան երբեք այդքան դաժան չէր լինի: Այդ ընթացքում, Աշոցի Տաճատ իշխանը արքային յայտնել է, որ Գրիգորը իր հայր Խոսրովին սպաննող Անակի որդին է: Տրդատ հրամայել է բանտարկել նրան Խոր Վիրապի մահապարտների արգելանոց:

Ամէն Մայիսին, տեղական կուսակցական մարմիններին համարձակօրէն դիմակայող, խորխտ տնօրէն՝ Մարտին Գարուշի Առաքելեա-

նի հետ գրասենեակի աշխատողներով հեքիաթացած այցի էինք գնում Արարատին: Խոր Վիրապի բլուրի բարձունքին, իրար գրկած, կորացած իրանով, ձեռքերնիս դէպի լեռան գագաթը պարզած լուռ աղօթում էինք Արարատին: Արիւնոտ մարդիկ բզկտել էին հողն հայոց ու փշալարերով բռնադատել հայոց ոգին՝ Լեռն Արարատ: Մեր երկարած ձեռքերը հպում էին երկաթէ փշերին, չեն թողի որ հպենք նրա ձիւնոտ դէմքին: Աղօթում էինք որ իր ընդերքի հուրը ժայթքէր, այրէր սահմանը ու ուղեկալները, գար համբուրելու Արտաշատին, իր ձիւնոտ ջրերը յորդելու դաշտին: Աղօթում էինք, որ հեթանոս աստուածները իջնէին նրա գագաթին, բուռ, բուռ ձիւն շողէն մեր դէմքերին, որ մեր սրտերը թրջուէին նրա կարօտից, որ մեր սրտերը Արարատի ոգու աւիւնով տրոփէին, որ նրանից ժայթքած լոյսով մկրտուէինք:

Ինքնաշարժը հովիկների ծփանքին յենած, սահում է դաշտով, կանաչ թեւիկներից կախ ընկած ձմերուկի ու սեխի բանջարանոցներն էին: Բնութեան հեքիաթային հրայրք չէ արդեօք, որ այդ վտիտ ոստերից հսկայ ձմերուկներ ու սեխեր են յառնել: Համեղ է ձմերուկը հայոց աշխարհի, ճեղքում ես, ցաւից ճաքում է, սակայն սեւորակ աչուկներով ժպտում քեզի, այդ ժպտից կաթում են հատիկ հատիկ անուշահամ բիւրեղներ, ինչու են այստեղի ձմերուկների աչուկները մարել: Ծիածանագոյն երկար սեխերը հողին թիկնած, գուլարթացած արեւին էին ժպտում, ասում էին որ նրանք հասունանում էին այն ժամանակ, երբ փոքր Մասիսի գագաթը թօթափում էր սպիտակը:

Դաշտից սպիտակ ծուխ է բարձրանում, Արարատ քաղաքն է: Հայոց մկրտութեան քարեղէն աւագանիկներում, Արարատի պաշտամունքով Արարատ մկրտեցինք մեր մանչերին, Արարատեան կոչեցինք այս դաշտը, «Արարատ» անունով լրագրերով Մեսրոպի լոյսը շողացինք հայոց սրտերին, գինու հնձանները «Արարատ» մկրտեցինք որ հայեր արբենան նրա աւիւնով, Արարատի անունով բազում միութիւններ, տներ, ընկերութիւններ կոչեցինք, «Արարատ» անունով ոտնազնդակի դաշտեր իջանք ու գարկինք բազում դարպասների ցանցերին՝ փառք բերելով Արարատին: Հեռու Աւստրալիացիներ Բիբլիական Արարատի յաւերժացման համար իրենց լեռը, նրա ստորոտի քաղաքը Արարատ են կոչել: Եթէ Արարատը Նոյի Տապանը իր ափերի վրայ վեր պահած չլինէր, Արարիչը կրկին կաւին փչելով Ադամ պիտի արարէ արդեօք եւ նրա կողակորից մի նոր «խաբեբայ» եւա:

Արարատ քաղաքը գրկող Սալակիթ լեռան բլուրները մաքուր կրաքար են ամբարել, այն աղում են ու հնոցներում այրելով կրածոյ են պատրաստում, որ աւագի հետ թրծաշաղախ դարձած ամուր պահի պատերն հայոց տների: Հայ իմաստուն գիտնականները, իրենց ոստան էին բերել այդ կրաքարերը եւ Հայկեան հանճարի բռնկումով նրա մշակումով աշխարհին առաջին անգամ պարգեւել ձգարիէթի ստացման արհեստագիտութիւն եւ այն ի փառս իրենց Նայիրեան աշխարհի «Նայիրիտ» կոչել:

Քաղաքի բլուրների յատակին

բազմել է Ոսկու կործման գործարանը: Ուրիշ ազգերին բռնի ուժով վանդակած «Միութիւն»ը անխնայ շահագործել էր Մեղրաձորի, Սեւանի Սոթֆի տեղամասի ընդերքի ոսկու հանքերը, հանքանիւթը շոգեկառքերով բերել այդտեղ եւ նրա խտանիւթը տարել, որ իր երկրի գանձատները լցնէր: Հայոց անկախացած երկրի անխոհեմ, անհեռատես տիրակալները, Արարիչի կողմից հայոց աշխարհին բաշխած ոսկին եւ այս գործարանը շահագործման են յանձնել Հնդկաստանի, Գանատայի ընկերութիւններին, որոնք նաեւ հայոց ոսկին տանում են

իրենց տներ: Հայոց ընդերքը այս տիրակալներին չի պատանում, այն հայոց գալիք սերունդներին է: Եթէ հիմա հանքեր շահագործելու միջոցներ չկային, հայոց ոսկին թող հանգիստ ննջէր ժայռերում, իր փայլի շառաչով այն հզորութիւն պիտի պարզէր երկրին, բանակին, հայոց գանձարանը պիտի լցուէին ժպիտով: Մի բարեկամի այցելութեան ժամանակ խորխտաբար, թէ խորհրդային կարգերի ժամանակ անխոհեմաբար, ասել էի որ ինչու էին հայերը իրենց երկրի ընդերքի

Մար. ք էջ 16

Ժամանակայայտ ԽՈՂԵՐ

ՀՈՎԱՆԱՌՈՐՈՒԹԵԱՄԲ
 ՀԱՅՅ. ԵԿԵՂԵՑՏՈՅ ՀԻՄՍԻԱՍԵՅՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆԻ
 ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ
 ԹԵՔԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԵԱՅԻՆ ՄՈՒԹԵԱՆ
 (Լոս Անճելոսի Մասնաճիւղ)
 ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԳՎԱՆՈՒՄ ՄՈՒԹԵԱՆ
 (Մշակութային Յանճնախումբ)
 ՉՈՐԳ-ՄԱՐԶՊԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄՈՒԹԵԱՆ

ԳԻՆԵՉՕՆ
 ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆԻ
 «ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՉ ԽՈՂԵՐ»
 ՀԱՏՈՐԻ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹՈՎ
 ՀԵՂԻՆԱԿԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ
 ՀԱՆԳԻՍԱԿԱՐ
 Տ. ՊԱՐԷՏ Ծ. ՎՐԳ. ԵՐԵՅԵԱՆ
 ԳԻՐԶԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՅՆԵ՛
 ՎԱՉԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ
 ԵԼՈՅԹ ԿՈՒՆԵԱՆ՝
 ԳԵՐՇ. Տ. ՅՈՎՆԱՆ ԱՐՔ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
 ՏՕՔԹ. ԿԻՐԱԿՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
 ՆՈՒՊԱՐ ՅԱԿՈՔԵԱՆ
 ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ
 ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
 ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ
 ՉՈՐԵՔՇԱՐԹԻ. ԳԵԿՏԵՄԲԵՐ 13, 2006
 ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 7:30-ԻՆ
 ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆԻ
 ԱՐՇԱԿ ԵՒ ԷԼԵԱՆՈՐ ՏԻԳՐԱՆԵԱՆ ՀԱՄԱԼԻՐ
 3325 N. GLENOAKS BLVD., BURBANK
 ՄՈՒՏՔԸ ԱՁԱՏ

ԴԵՊԻ ԿԱՐՕՏԻ ՃԱՄԲԱՆԵՐ ԴԵՊԻ ԵՐԱՍԽԱԲԱՆ

Շարունակում էք 15-էն

բազում հանգամանակները բացառապես, այն չթողնելով հայոց գալիք սերունդներին: Ներկաներից մեկը, որը կուսակցական շրջանային քարտուղար էր եղել, սպառնազին պողոտա թէ ես ինչպես էի համարձակում խորհրդային կարգերի փլուզումը աւետել, սակայն տեսէք ինչ պատահեց, մարդկային հասարակութեան բնական զարգացման ընթացքը չհանդուրժեր այն:

Ինքնաշարժը գնում է այգիները ձեռքով և խճուղիով, կարծես Արարատեան դաշտը փոքրանում էր, ձախ կողմի բլուրները սահում էին ներքեւ, հայ ռանչպարը նրանց կողերն էլ կանաչով էր չուլթել: Սուրհանաւանի խաղողի ու պտղատու այգիներն են աջ ու ահեակ փուռել: Ծիրանները շարք, շարք իրար բռնած տողանցում էին, կանաչով պղնձաւած ժպտում էին արեւին: Արարատեան դաշտում առաջինը այստեղ է ծիրանը արեգակի ճառագայթների կրակով հուրհուրում, ծառերի սաղարթներին ոսկի փուռում, ծիրանն էր հասունանում, հայոց հեթանոս աստուածներն էին այն տիեզերքից բերել հայոց աշխարհ: Այն խոշոր է, հիւթեղ, տիեզերքի անհունների բոցն է այնտեղ իջել, արեւի համն է յորդել այնտեղ: Սպանդարեան Սուրհանի անունով էին Սուրհանաւան կոչել այն: Անամօթ Ուլեանով, երբ Փարիզում Սուրհանի հիւանդ ու աղքատացած հայր Սպանդարին է այցելել, ըստ իր յուշերի նրան փոխ դրամ է տուել, այդ էլ այն դրամից, որ կամօն յափշտակել էր Թիֆլիսի հրապարակում եւ այն

ուղարկել էին իրեն, ամօթ ունէին նրանք...:

Սուրհանաւանի այգիները գրկախառնուել էին Արմաշին: Արմաշ, գիւղ թուրքիայի Իզմիթ (Նիկոմէտիա) գաւառում, Վոսփորի ափերի մօտ, որ 625 թուականին հիմնադրած էին եղել Արեւմտեան Հայաստանից գաղթած հայեր: Հայաբնակ գիւղ էր եղել, 1611 թուականին այն վերակառուցել էին Պարսկաստանից գաղթած հայեր: Հայոց ազգապատումի քերթող՝ Մաղաքիա Օրմանեան եպիսկոպոսը (յետագային Պոլսոյ Պատրիարք) այնտեղ հիմնադրել էր Դպրեվանք՝ հոգեւոր բարձրագոյն ուսումնական հաստատութիւն: Դպրեվանքի մատենադարանում ժողովել էին բազում գրչագիր մատենաներ, որոնք յետագայում բոլորը թուրքի արիւնոտ ձեռքերով սպանուել էին: Արմաշն էին բոլորել թիթեւու պարտէզները, որ շերամ բուծէին, մետաքսայ թելել գործէին նրանց դագաղներից, որ սուլթանի լպիրշ մարմինները ծածկէին: Եւ թուրքը այսօր հայու վրէժի շառաչից մոլորուած, լկտիաբար ցնդաբանում է, որ հայերին տեղահանել էին ռազմաճակատի գոտու ապահովութեան համար: Հապա Վոսփորի ափերի Արմաշի, Իզմիթի, Բուրսայի, Ատապազարի, Պարտիզակի, Բիւլէճիկի, Կոմիտասի հայրենի գիւղ Քուլթասիայի հայերին ինչու համար էին տեղահանել, այնտեղ էլ ռազմաճակատի գոտի էր արդեօք: Եւ Արմաշից փրկուած հայեր հասել էին Արարատեան դաշտ, իրենց կորուսեալ աւանը կենդանացրել:

Բարեւ եմ կանգնում Արմաշի այգիներին, օճախներում վառուող

Տ. ՊԱՐԳԵՒ ԱՐՔԵՊՍ. ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ

Շարունակում էք 7-էն

այն խօսքը թէ երբ մարմինն մէկ անդամը կը տկարանայ ու կը տառապի, միւս մասերը անպայման օգնութեան կը հասնին, դարմանելու համար գայն: Նոյնպէս, հայ ազգի բազում կարիքները միասնաբար դիմագրաւելու հրաւէր կայ միշտ, յատկապէս երբ տարին անգամ մը Գոհաբանութեան Օրը համազգային

ձիգով Լեւոնային Ղարաբաղի օգնութեան կը հասնին բոլոր հայորդիք, մասնաւորաբար Հայաստանի, Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ, որոնց միացեալ նիւթական օժանդակութեամբ օր ըստ օր է կը վերականգնի ու հաստատ կը մնայ Արցախի աշխարհն ու եկեղեցական թեմը:

Ծխական Խորհուրդի կողմէ կէսօրուան հիւրասիրութիւն տեղի ունեցաւ ի պատիւ Պարգեւ սրբազան Հօր:

կրակից ժայթքած, դէպի երկնի կապոյտը ճախրող՝ նորոգ կեանք աւետող ծուխի սիւներին: Երասխաւանում ինքնաշարժը ոտքերը հողին հպած կանգ է առնում: Հայոց մայր գետի Արաքսաւանն է: Աստուածաշնչում այն կոչել էին Գեհոն՝ որպէս դրախտի չորս գետերից մէկը: Հայոց Արամայիս թագաւորը գետի ափին տուն էր շինել, այն կոչել Արմաւիր եւ գետը իր Երաստ թռուան անունով՝ Երասխ անուանել: Այն կողմը սահմանն է, ցուրտ հեռու երկրի, կարմիր ձիւնոտ երկրի մարդիկ պատել էին այն, տարագրել Գողթան գաւառին, լռեցրել բանաստեղծ երգիչներն, կտրել ճանապարհը Նոյի, որ հայեր չգնան իր «Նախ-իջեանը»:

Դուք հայեր «Ազնուագոյնը հիւսիսային ժողովուրդների» այն 1921 Մարտին երբ Արտաշէսի ուստանի մատոյցներում բզկտում էիք իրար, ձեր փոքրացած երկիրը թողած առանց թագաւորի, Մոսկովի մարդիկ փշալարեր էին քաշում ձեր դաշտում: Հայոց քրտինքով, արեամբ սրբացած հողը, տաճարները ու նախնիների դամբարան-

ները տալիս էին տնօրինելու շնագայլերի վոհմակներին: Դուք հայ բոլշեւիկներ, թաւած նրանց թաւերին «Ամբոխները խելագարուած» էիք կանչում, «Ինտերնացիոնալ» էիք երգում: Դուք, նոր գաղափարների ոգեշունչ այրեր, պարսիկի, արաբի, թուրքի ստապատիր խոստումներին հաւատացող ձեր նախնիների նման ուռսին էլ հաւատացիք, խաբեց ձեզ, ձեր երկիրը բզկտեց՝ յանուն արեւելքում իր գաղափարների յաղթանակի: Եւ բանտարկեցին, սպանեցին բազում քաջերի ու իմաստուններին, հարիւրաւոր հայ զօրավարներն տարան իրենց ցուրտ երկիր, որ թուրքի նման իրենց երկիրը թողնէին առանց մարտնչողների: Ինչու իրենց սեւ հոգիների վրայ կարմիր զգեստ կապած թաթարը յանդգնում էր պահանջելու նոյնիսկ իրեն չպատկանածը, իսկ նոր գաղափարներին փարած «Ինտերնացիոնալիստ» հայ բոլշեւիկները հիմա էլ լուռ էին, երեւի դեռ չէին եկել ազգային ոգով տրոփող բանաստեղծներ, որ «Մեր Հայրենիք»ը շուրթերին շանթեր բեկանէին:



MIDDLE EAST RESTAURANT

الشرق مطعم

MEDITERRANEAN LEBANESE FOOD



Wahib

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

CATERING FOR ALL OCCASION



FAMILY ENTERTAINMENT BANQUET HALL EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT INTERNATIONAL ~ ARABIC CALL FOR RESERVATION

BELLY~DANCING



MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

910~E.MAIN ST, ALHAMBRA, CA. TEL 626-281-1006 626-587-1048 FAX 626-281-3641

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL(626) 795-4493

ՊՈԼՍՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Շարունակուած էջ 8-էն

«Անուոյ Արքեպիսկոպոս» պատուանունով: 3 Նոյեմբերին կը վերադառնայ Ատանա եւ Զէյթունի Յանձնաժողովին կը նշանակուի իբր խորհրդատու անդամ: Զէյթուն 1862ին Պապիկ Փաշայի ղեկավարութեամբ ապստամբած էր եւ նոյն տարուայ Դեկտեմբեր 9ին կը վերադառնայ Պոլիս:

1863 Սեպտեմբեր 20ին, 26 տարեկան հասակին, կրօնական ժողովի ատենապետ կ'ըլլայ:

1863 Մարտ 17ին, որ մեծ բարիք եղաւ Հայերուն հիմնելու իրենց դպրոցներն ու այլ մշակութային հաստատութիւնները, կրթական եւ դատարարական գործերը ազատօրէն վարելու իրաւասութեամբ եւ Պոլսոյ մէջ կազմուեցաւ ուսումնական խորհուրդը:

Նոյն տարին, Ներսէս Պատրիարքի գրեթէ տարեկից համաթաղեցի ուսուցիչ Ստեփան Փափագեանի առաջարկով գաւառացի մանուկներու ուսում ջամբելու եւ գանոնք գարգացնելու մտօք՝ գաւառական Կեդրոնական վարժարանի մը հաստատման որոշումը առնուեցաւ եւ առաջարկողն ալ տեսուչ կարգուեցաւ:

1864 Յունուար 21ին, կը հրատարակուի Ներսէս Պատրիարքին «Քրիստոսի Ս. Եկեղեցին եւ անոր հակառակորդները» անուն գրքոյկը:

1865ին, Մկրտիչ Եպսկ. Քէֆ-սիգեանի (ապա Կաթողիկոս՝ Կիլիկիոյ) խնդրին համար իբրեւ քննիչ Եգիպտոս կ'ուղարկուի եւ հոն մի քանի կտակներու հարցը կարգադրելէ յետոյ կը վերադառնայ Պոլիս: Նոյն տարին, Նուպար Փաշայէն ալ նպատակ մը ապահովելով եւ Կարապետ Շահնազարեան վարդապետի կտակով կը հիմնէ Նուպարեան-Շահնազարեան վարժարանը խասգիւղի մէջ, որ 1866ին կը բացուի իր տեսչութեամբ: Հոն չորս տարիներ պաշտօնավարեց հասցնելով ապագայի կարկառուն դէմքերէն ոմանք (Մինաս Չերազ, Եղիա Տէմիրճիպաշեան, Ռէթէոս Պէրպէրեան եւն):

Նոյն տարին, Սահմանադրական վերաքննիչ մասնաժողովին կ'անդամակցի: Դեկտեմբեր 14, 1865ին ընտրուած Կաթողիկոսական Յանձնաժողովին ալ մասնակցելով կ'ընտրուի ատենապետ:

1866 Յունիս 27 Պոլսոյ պատրիարքարանի ընդհանուր ժողովին կողմէ Կաթողիկոսական պատգամաւոր կ'ընտրուի: Նոյն տարին, Սեպտեմբեր 15ին գումարուած Ս. Էջմիածնի եկեղեցական համագումարին կը մասնակցի:

1869ին Յունուար 1ին, Եպիսկոպոսական հրամանով կազմուած խառն ժողովին կ'անդամակցի: Նոյն տարին, պատրիարքական թեկնածու կ'ընտրուի ժողովուրդին կողմէ, բայց իր անունը թեկնածուներուն ցանկին մէջ չ'ըլլալով, Մկրտիչ Արք. Խրիմեան (Խրիմեան Հայրիկ) կ'ընտրուի Պատրիարք:

1870ին, Նիկողիմիոյ (Իգմիթ) առաջնորդ կ'ընտրուի եւ կը հրատարակուի Նուպարեան-Շահնազարեան վարժարանի տեսչութենէն:

Այս թուականներուն, Օսմանեան կայսրութեան բիրտ ու դաժան տիրապետութեան տակ հիւժող գաւառի հայութեան վիճակը ալ աւելի վատթարացաւ: Սուլթաններու, քիւրտներու ձեռքով կատարուած գանդուածային կոտորածներու, ճնշումներու, հալածանքներու եւ բռնի

ձուլելու քաղաքականութեան արդիւնք՝ սկսան տեղալ բազմաթիւ բողոքագիր եւ աղերսագիրներ գաւառէն դէպի Պոլսոյ Պատրիարքարանը եւ 1870ի Նոյեմբեր 27ին, հարստահարութեանց համար ընտրուած գաւառական յանձնախումբի ատենապետ կը կոչուի Ներսէս Սրբազանը:

1872ի Ապրիլ 29ին, պատահած 1866ին պատահած Սամաթիոյ մեծ հրդեհի աղետեղաններու համար, հանգանակութեան պաշտօնով կ'ուղեւորուի Կովկաս եւ Ս. Էջմիածին, Մայիս 17ին իջման Ս. տեղին առջեւ կը կատարէ նաեւ իր հաւատարմութեան երդումը եւ Նոյեմբեր 10ին կը վերադառնայ Պոլիս:

Մինչ այդ՝ Ղալաթիոյ գաւառական Կեդրոնական վարժարանի տեսուչ՝ ազգային գործիչ Ստեփան Փափագեան կը շարունակէ Ազգային Կեդրոնական վարժարանի մը հիմնադրման միջոցները պատրաստելու որ նոյն տարին կը նշանակուի Ազգային ժողովի անդամ եւ ատենապետ:

Ներսէս վարժապետեան 1874 Փետրուար 18ին, պատրիարքական տեղապահ կ'ընտրուի եւ Ապրիլ 14ին ալ Խրիմեան Պատրիարքին հրաժարումով թափուր մնացած պատրիարքական աթոռը կը բարձրանայ, ժողովի ներկայ 67 անդամներուն 60ին քուէներով 34 տարեկանին:

Երբ Ներսէս վարժապետեան Սրբազանը պատրիարքական աթոռ բարձրացաւ, Ստեփան Փափագեանը որ զիտէր անոր կրթասիրական ձգտումներն ու վեհանձնութիւնը, դիմեց անոր Ազգային Կեդրոնական վարժարանի հիմնադրութեան համար:

Ճիշդ նոյն թուականներուն, հաստատուեցաւ Էջմիածնի Գէորգեան ձեմարանը, որ Մոսկուայի Լազարեան վարժարանէն յետոյ արեւելահայութեան Բարձրագոյն ուսումնարանը եղաւ, երկար տարիներ հասցնելով կղերական եւ աշխարհական անուանի դէմքեր:

Թէեւ Ներսէս Պատրիարքին փափաքն էր խառնուելու Նուպարեան-Շահնազարեան վարժարանը վերածել Գէորգեան ձեմարանի նման արեւմտահայութեան արժանաւոր կղերականներ հասցնող ժառանգաւորացի դիւրօթիկ հաստատութեան մը, իր կտակարար եւ հիմնադիրներու ալ հաւանութեամբ՝ բայց չ'իրականացաւ կարգ մը պատճառներով: Ստեփան Փափագեանի առաջարկին նեցուկ կանգնեցաւ իր նպատակից տը դարձուց անոր իրականացումը: Ասկէ յետոյ Ներսէս Պատրիարքի ուսումնական յեղափոխութիւնն ու աւելի յետոյ Հայկական հարցի եւ հայ քաղաքական իրաւունքներու ճանաչման ուղիով տարած պայքարը կը սկսի:

1875ին, Արմաշու տպարանէն լոյս կը տեսնէ իր «Ուսումն Համաբարբառ Աւետարանի» երկասիրութիւնը:

1896ին, Ղալաթիոյ մեծ հրդեհէն վնասուած շէնքերուն ապահովագրութեան հասցիով կառուցուեցաւ Կեդրոնական վարժարանի արդի շէնքը որուն մայր դրան ճակտին վրայ փորագրուած է հետեւեալ արձանագրութիւնը:

«ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐժԱՐԱՆ, ԿԱՌՈՒՅՑԱԼ ԱՐԴԵԱՐՔ Ս. ՍՈՒՍԱՆՈՐԻՉ ԵԿԵՂԵՑ-ԻՈՅՍ ՂԱԼԱԹԻՈՅ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ Տ. ԳԵՈՐԳԱՅ Հ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ»

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ, 1876

Շէնքը պատրաստ, բայց դրամ չկար որ գործի անցնէր: Երջանկալիշատակ Պատրիարքը որ ճիգ կը թափէր Ազգային Կեդրոնական վարժարանի բացման իր գլխաւոր մտահոգութիւնը դարձուց անոր նիւթական ապահովութիւնը:

1878 Մարտ 3ին, Ռուս Օսմանեան պատերազմին արդիւնք, երկու տէրութեանց միջեւ կնքուած Այս Սթեֆանո (Եշիլգիւղ)ի դաշինքին կը մտցնէ 16րդ յօդուածը որ Օսմանեան պետութիւնը յանձնառու կ'ըլլայ հայահոծ արեւելեան վեց նահանգներուն մէջ բարեկարգութիւններ կատարել եւ ապահովութիւնը երաշխաւորել հարստահարութեանց դէմ:

1878ի Ռուսիոյ յաջողութիւնը եւ Այս Սթեֆանոյի դաշնագիրը ոտքի կը հանեն Օսմանեան պետութենէն շահ ակնկալող Եւրոպական մեծ պետութիւնները եւ դարձեալ 13 Յունիս 1878ին գումարուած Պերլիւնի վեհաժողովին, յաղթական Ռուսիան կը զրկուի իր յաջողութեան բարիքներէն որ Այս Սթեֆանոյի դաշինքով ձեռք ձգած էր:

Ներսէս Պատրիարքի վեհաժողովին ղրկած պատուիրակութեան (Խրիմեան Հայրիկ, Մինաս Չերազ, Խորէն Արք. Նարայէ եւ յետոյ Ստեփան Փափագեան) ժողովի մասնակցելու ջանքերը ապարդիւն մնացին եւ 16րդ յօդուածը փոխուեցաւ 61րդ եւ Արեւմտահայութեան ապահովութեան եւ բարեկարգութեան հսկողութիւնը տրուեցաւ Օսմանեան կայսրութենէն տարբեր շահեր ակնկալող Եւրոպական մեծ պետութիւններուն: Իրենց շահերուն հետ կապուած խնդիր մ'ըլլալով հայկական հարցը, մնաց անիրագործելի եւ արժանացաւ ընդհանուրին անտարբերութեան:

61րդ յօդուածի թուլութենէն օգտուելով, Կարմիր Սուլթանը որոշեց ջարդել հայութիւնը, ոչնչացնելու համար անոր հարցը իր հետ միասին:

Ըմբոստացումի ձայնը սկսաւ հնչել նոյնիսկ Պոլսոյ Ազգային ժողովի բեմէն որուն անդամները միշտ Ռուսիանաններու, Գրիգոր Օտեան Էֆէնտիներու գերիադադասէր քաղաքականութեան հնազանդելով չափական, օրինապահ եւ խոհական էին: Գաւառներէն եկած հարստահարութեան լուրերու եւ բողոքագիրներու հետեւանքով, Ազգային ժողովի պատգամաւորութիւնը գնաց գանդատելու Բարձր Դուռ Եպարքոսին, որուն պաղ է թշնամական խօսքերով մերժուեցան եւ ետ վերադարձան: Խորունկ յուսալքում ծայր կու տար հայկական շրջանակներու մէջ:

Երբ 1878 Մայիս 11ին, Եպարքոսի պատասխանը հարորդուեցաւ Ազգային ժողովին մէջ, Արեւմտահայութեան ամենէն զգալուն եւ ըմբոստ մտաւորականներէն կրթական մշակ, Կեդրոնականի նախահիմնադիր Ստեփան Փափագեան բեմ բարձրանալով ապստամբութեան համարձակ կոչ մը ըրաւ ներկաներուն:

1881 Նոյեմբեր 12ին, Ներսէս Պատրիարք, մեծ Եպարքոսի կը ներկայացնէ իր հրաժարականը, սակայն չ'ընդունուի: Յաջորդ օրը Արդարութեան Նախարարին կը յանձնէ գայն եւ Սուլթան Համիտի ստիպմամբ, 3 Դեկտեմբեր 1882ին կը հարկադրուի իր աթոռը վերադառնալ:

Պերլիւնի վեհաժողովէն ձեռնունայն դարձած՝ Հայ Ազգային գործիչները եւ մտաւորականութիւնը սկսան հասկնալ Խրիմեան Հայրիկի

Երկաթէ Շերեփին իմաստը ալ աւելինով: Անոնք Հայոց մէջ մտաւոր վերածնունդի «Զարթօնքի» գորաւոր մղում մը տալով հանդերձ, անտեսած էին այն զէնքերը, որոնցմով ազգ մը կրնար ձեռք ձգել իր քաղաքական ազատութիւնը, որ ժամանակին կրաւորական դիրք բռնած էին Խրիմեան Հայրիկի վարագայ վանքի բարձունքներէն ղրկած պատգամներուն:

Սահմանադրական օրէնսդիրները իրականութեան մէջ պարտաւոր էին քննել ժողովուրդին վիճակը, պէտքերը եւ բարքերը, որուն օրէնք սահմանելու կոչուած էին: Այն ժողովուրդին որ մեծամասնութեամբ կ'ապրէր գաւառներու մէջ, ոչ թէ Պոլիս եւ շրջակայքը:

Օսմանեան վարչական կազմը շատ յաջող էր իր դիւանագիտական ասպարէզին մէջ, թէ կը քաջալերէր հայ ղեկավարները եւ մտաւորականութիւնը ազգային սահմանադրութեամբ եւ համեմատաբար ազատ խօսելու իրաւունքով եւ թէ միւս կողմէն աստիճանաբար կը բնաջնջէր գաւառի հայութիւնը թէ՛ քիւրտներու եւ թէ՛ իր մակաբոյժ պաշտօնեաներու ձեռքով:

Հիմա աւելի զգալի էր բարձրագոյն մակարդակով դպրոցներու հիմնադրութեան եւ Խրիմեան Հայրիկին պատգամներուն հնազանդելու անհրաժեշտութիւնը:

Մտաւորականներուն, դպրոցասէրներուն եւ Ներսէս Պատրիարքի եւ համախոհներուն ջանքերով սկսաւ Ազգային Կեդրոնական վարժարանի բացման ուղղութեամբ աշխատանքներ:

1884 Մայիս 9ին Ս. Էջմիածնի մէջ տեղի ունեցած եկեղեցական համագումարին, 27 քուէով Ամենայն Հայոց Կաթողիկոս կ'ընտրուի Ներսէս Պատրիարք վարժապետեան: Իր ընտրութիւնը Ձարթի կողմէ ալ ընդունուելով հանդերձ, իր առողջութեան պայմանները թոյլ չտուին որ ընդունէր այս մեծագոյն պաշտօնը, հայ ազգը զրկելով Լուսաւորչի գահին արժանի անձէ մը:

1884 Հոկտեմբեր 15ին, կը գրէ միանգամայն հրաժարագիր, շնորհակալագիր եւ հրաժեշտի ողջոյն մը եղող յայտարարութիւնը:

1884 Հոկտեմբեր 26ին, Օրթագիւղի իր բնակարանին մէջ կէս գիշերին հոգին կ'աւանդէ, զո՛ր դառնալով շաքարախտին:

50 հազար անձերու մասնակցութեամբ, մեծահանդէս յուղարկաւորութիւնը կը կատարուի Հոկտեմբեր 28ին Կիրակի օր, որուն ընթացքին կը նուազուի մեծանուն երգահան Տիգրան Չուխաճեանի այս առթիւ յօրինած մահաւանդ քայլերգը: Կը թաղուի Մայր եկեղեցւոյ գաւիթը:

Ներսէս Պատրիարք իր մահամերձ օրերուն, կատարեալ համոզում մը կ'ունենայ թէ ի գին ամէն գոհողութեան պիտի իրագործուի իր մեծագոյն բաղձանքը: Անոր անդամանելի կորուստին պատճառած կակիճն ու սրտաբեկութիւնը պահ մը ենթադրել կու տան թէ անկատար պիտի մնայ կամ պիտի յետաձգուի իր ձեռնարկը:

Իր մահուրէն երկու շաբաթ վերջ կազմուած Ներսէս վարժապետեան ուսումնարանի ընկերութեան ջանքերով դպրոցը կը բացուի 1 Սեպտեմբեր 1886 թուականին, տնօրինութեամբ իր ամենավստահելի աշակերտներէն՝ Մինաս Չերազի եւ ժամանակուայ ամենայառաջադէմ ուսուցիչներու ներկայութեամբ իր հիմնադրութենէն 10 տարիներ յետոյ, որ կը շարունակէ իր առաքելութիւնը մինչեւ այսօր:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՐՄԷՆ ՉԱՐԳԵԼԴԵԱՆԸ ՎԱՅԱՍՏԱՆԻ 2006-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒԹՊՈԼԻՍԵԸ

2006թ. Հայաստանի լաւագոյն ֆուտպոլիստ է ճանաչուել Աշտարակի «Միկա»-ի եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Արմէն Շահգեղեանը:



2006 թուականի տարուայ լաւագոյն ֆուտպոլիստի որոշման հարցմանը մասնակցել են «Փիւնիկ», «Միկա», «Բանանց», «Արարատ», «Կիլիկիա», «Գանձասար», «Շիրակ», «Ուլիս» ակումբների նախագահները, այդ ակումբների թիմերի գլխավոր մարզիչները եւ մարզչական շտաբները, բարձրագոյն խումբը սպասարկած մրցավարները եւ տեսուչները, գանգուածային լրատուամիջոցները: Հարցումն անցկացուել է հետեւեալ սկզբունքով. իւրաքանչիւր ակումբի նախագահ ներկայացրել է 3 լաւագոյն ֆուտպոլիստի թեկնածութիւն ըստ հերթականութեան՝ գրկուած լինելով սեփական ակումբի թիմը ներկայացնող ֆուտպոլիստի թեկնածութիւնը տալու իրաւունքից:

3 ֆուտպոլիստի թեկնածութիւն ըստ հերթականութեան ներկայացնելու իրաւունք են ստացել նաեւ թիմերի գլխավոր մարզիչները, մարզչական շտաբները՝ նոյնպէս գրկուած լինելով սեփական թիմերը ներկայացնող ֆուտպոլիստներին առաւելութիւն տալու իրաւունքից:

Շահգեղեանը հաւաքել է 191 միաւոր: Երկրորդ տեղում է «Փիւնիկ»-ի պաշտպան Ռոբերտ Արզումանեանը՝ 161 միաւորով, իսկ «Բանանց»-ի կիսապաշտպան Սամուէլ Մելքոնեանը 108 միաւորով երրորդն է:

ԸՄԲՃԱՍԱՐՏ

ՄԵՏԱԼՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻՑ

Հայաստանի յունահռոմէական ոճի ըմբիշներ, 60, 66, 74 կգ քաշայիններ Վահան Զուղարեանը, Արման Ադիկեանը եւ Արսէն Զուլֆայակեանը նուաճել են ոսկէ մետալներ Ֆրանսայի Նիցցա քաղաքում աւարտուած Անրի Դելանէի անուան ըմբշամարտի միջազգային մրցաշարում: 66 քաշայիններ Արման Պապեանը եւ Տիգրան Սահակեանը գրաւել են ընդամենը 5-րդ հորիզոնականները:

Յաջող են հանդէս եկել նաեւ ազատ ոճի ըմբիշներ Հայկ Եղիկեանը եւ Արթուր Առաքելեանը՝ 60 կգ քաշային կարգում գբաղեցնելով համապատասխանաբար, 3-րդ եւ 5-րդ տեղերը: 66 կգ քաշային Ժիրայր Յովհաննիսեանն էլ գբաղեցրել է երկրորդ, իսկ 74 կգ քաշային Գարսեան Վարդանեանը, 84 եւ 96 կգ քաշայիններ Էդգար եւ Յարութիւն Ենոքեանները գբաղեցրել են երրորդ տեղերը:

ԲՈՆՑՔԱՍԱՐՏ

ԵՐԵՒԱՆՈՒՄ ԿԱՆՑԿԱՑՈՒԻ ԷՂՈՒԱՐԴ ԱՐԻՍԱԿԵՍԵԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՅՈՒՇԱՄՐՑԱՇԱՐԸ

Դեկտեմբերի 7-11-ը Երեւանի «Դինամո» մարզադահլիճում կ'անցկացուի բոնցքամարտի միջազգային մրցաշար: Այն նուիրուած է ԽՍՀՄ բազմակի չեմպիոն եւ մրցանակակիր, Համաշխարհային ունիւերսիտադայի ոսկէ մետալակիր, ԽՍՀՄ սպորտի վաստակաւոր վարպետ եւ վաստակաւոր մարզիչ, բոնցքամարտի օլիմպիական խաղերի հայաստանցի միակ ախոյեան Վլադիմիր Ենգիբարեանի անձնական մարզիչ Էդուարդ Արիստակէսեանի յիշատակին: Տանտէրերից բացի միջազգային յուշամրցաշարին կը մասնակցեն Ռուսաստանի, Վրաստանի եւ Չեխիայի կաշուէ ձեռնոցի վարպետ տները:

Advertisement for Jessica Demirdjian, Realtor, with contact information and address: 1060 N. ALLEN AVE. PASADENA, (626) 797-7680 (626) 398-0506

Advertisement for Jessica Demirdjian, Realtor, with contact information and address: 9915 Mira Mesa Blvd., Suite 100, San Diego, CA. 92131

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈԼ

ԱՆԳՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Անգլիոյ ֆուբպոլի առաջնութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Arsenal vs Tottenham, Liverpool vs Manchester City, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Team, P, W, D, L, GF, GA. Rows include Arsenal, Liverpool, Manchester United, etc.

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Գերմանիոյ մրցումնիոյ ֆուբպոլի առաջնութեան 15-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Bayern Munich vs Borussia Dortmund, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Team, P, W, D, L, GF, GA. Rows include Bayern Munich, Borussia Dortmund, etc.

ԻՏԱԼԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Իտալիայի ֆուբպոլի առաջնութեան 14-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Juventus vs Lazio, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Team, P, W, D, L, GF, GA. Rows include Juventus, Lazio, etc.

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի ֆուբպոլի առաջնութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Lyon vs Marseille, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Team, P, W, D, L, GF, GA. Rows include Lyon, Marseille, etc.

ՍՊԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ

Սպանիայի ֆուբպոլի առաջնութեան 13-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Table with 4 columns: Team 1, Score, Team 2, Score. Rows include Real Madrid vs Barcelona, etc.

Առաջատար խումբերու դասաւորումը

Table with 6 columns: Team, P, W, D, L, GF, GA. Rows include Real Madrid, Barcelona, etc.

ԹՈՂ ՅԱԷՏ ՎԱՌ ՄԱՅ ԿԻԼԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԶԱՆԸ

Շարունակում է լինել

Կիլիկիանը կ'առաջնորդուի այդ ոգիով: Այդ ոգին պիտի տիրապետե առ յաւերս:

Հիմնադիր Մարմնի ու անոր յաջորդող խնամակալութիւններու վերանշնչակալութիւնները, ակնկալութիւնները, աշխատանքները տուին իրենց պտուղները:

1921, իր կրթական առաջին տարիէն մինչեւ օրս, Կիլիկիանի աշակերտած բազմաթիւ շրջանաւարտներ իրենց հայեցի դաստիարակութեամբ, գիտական պաշարով ու քաղաքացիական վարձակալութեամբ, օրինակելի եւ առաջատար քաղաքացիները դարձան գիրքեմ հիւրընկալած երկիրներուն: Մեծ թիւ կը կազմեն այն կիլիկեցիները, որոնք հասան պատուաւոր դիրքերու ըլլալ իր քաղաքացիական եւ ըլլալ գիտա-ասպարէզային բնագաւառներէ ներս:

Անոնք միշտ սատար հանդիսացան ու կը հանդիսանան հայեցի աւանդութիւններու պահպանութեան:

Անոնք Հիւսիսային Սուրիոյ Հալէպ քաղաքի սահմաններէն ներս եւ դուրս, նախաձեռնող, այլ, գործօն ներկայութիւն դարձան, ու կը մնան, մշակութային, մարզական, գեղարուեստական ու ազգային-ընկերային ձեռնարկութիւններէ ներս, գանձեր ներառելով հայրենի-Սփիւռք կապերու առաւել գար-

գացման աշխատանքին մէջ:

Երեկուան իր հոգեվարքը ապրող գաղթականացած որբեայրին՝ շնորհիւ իր ստացած ազգային ներուժին, վերջուցած գոյութեան պահպանման մարտահրաւերներուն, ու առաջադրած ազգային սրբազան երազներուն հաւատարիմ, հասակ առաւ, վերականգնեցաւ ու տակաւ գորացաւ:

Իր կրթական գործունէութեան 85-ամեակի բոլորման ներկայիս գրումներին՝ Կիլիկիան վարժարանը ունի մեր սփիւռքահայ կրթական կառոյցներուն ուղղուած սրտառուչ պատգամ. որ կը յորդորէ. « հայկական կրթական հաստատութիւնները պարտաւորութիւն ունին պատրաստելու վաղուան տիպար հայր մշակուած մեսրոպեան լեզուով, իւրացուած հայկական մշակոյթով, եւ ազգային-հայրենասիրական ուժեղ վարձակալութեան մէջ օգտագործել նաեւ մայրենի լեզուն: Մեր հայրերը մեր սկզբունքներուն հաւատարիմ մնալով է, որ Կիլիկիանը կը պահել իր ու իրեն վստահուած մեր սերունդներու հայեցի գոյութիւնը»: Այս պատգամը իր մէջ անպայմանօրէն կը խտացնէ այն հիմնականը, որ չունին եւ չեն իսկ կրնար ունենալ օտար հաստատութիւններ, որոնց կոչումն է պարզապէս կերտել վաղուան ասպարէզի մարդիկը:

Ողջոյն, հազար ողջոյն Կիլիկիան վարժարանի 85-ամեակին:

ԹԻԼԻՍԻՆ ՊԵՏԵ Է ՈՒՇԱԴՐՈՒ ԼԻՆԻ

Շարունակում է լինել

Վարդերի յեղափոխութիւնից՝ կառավարութիւնն իրագործում է օրէնքներ, որոնք փոքրամասնութիւններին պարտադրում են հաղորդակցուել տեղական պաշտօնեաների հետ, անգամ ստանալ պաշտօնական փաստաթղթեր, ներկայացնել բողոքներ եւ օգտուել հանրային ծառայութիւններից վրացերէնով»:

Մձև-ն վրաստանի իշխանութիւններին առաջարկում է փոքրամասնութիւնների համար վրացերէնի ուսուցման ծրագիր մշակել: Բայց մինչեւ նոր սերունդը կրթուի, փոքրամասնութիւնների նկատմամբ խտրականութիւն պէտք չէ լինի, ուստի խումբը կոչ է անում վրաստանի կառավարութեանը ընդունել այնպիսի օրէնքներ, որոնք փոքրամասնութիւններին հնարաւորութիւն կը տան պաշտօնական գործավարութեան մէջ օգտագործել նաեւ մայրենի լեզուն:

Փորձագէտ Սերգէյ Մինասեանը եւրասիական հարթութիւնում է դիտարկում Ջաւախքում առկայ խնդիրների լուծումը: Նա ասում է, որ Եւրոպա ձգտող վրաստանը պարտաւոր է ազգային փոքրամասնութիւնների իրաւունքները ընդունել: «Հարցը պէտք է լուծեն Ջաւախքը եւ վրաստանը: Հայաստանը եւ Եւրոպան շահագրգիռ-հետաքրքրուած կողմեր կարող են լինել», - նկատում է նա:

Մինասեանի կարծիքով, ի տարբերութիւն Արցախի հարցի, Ջաւախքի հարցում փոխզիջման լաջն տեղ կայ՝ պարզապէս հարկ է չաղթահարել վախը եւ կարծրատիպերը ու հարցը քննարկել առանց վախի. «Մձև զեկոյցը կարող է օգտագործուել որպէս փաստարկ վրաստանի հետ բանակցութիւններում»:

Մձև-ն իր զեկոյցում առաջարկում է շրջանի բնակչութեան 20 տոկոսից աւելին ազգային փոքրամասնութիւն լինելու պարագայում պետական գործավարութիւնը վարել, դատական գործերը լսել ազգային լեզուով, վրաստանի պետական համալսարանի Ախալքալաքի մաս-

նաճիւղում վերականգնել բուստանները՝ տեղերի նուազագոյնը 50 տոկոսը ազգային փոքրամասնութիւններին տրամադրելով: Հայաստանում վստահ են, որ այս կերպ նաեւ երիտասարդների վրացերէն սովորելու հարցը կը լուծուի: Այսօր աւելի ու աւելի քիչ երիտասարդներ են դիմում այս բուն՝ լեզուական խնդրի պատճառով: Ինչպէս նշում է Հայաստանի վարչապետի խորհրդականը, Հայաստանի կառավարութիւնը պատրաստ է օժանդակել վրաստանի պետական համալսարանի Ախալքալաքի մասնաճիւղի հզորացմանը:

Մձև զեկոյցում ասում է. «Փոքրամասնութիւնները շարունակում են գաղթել Հայաստան եւ Ատրպէյճան: Սակայն ո՛չ Երեւանը, եւ ո՛չ Պաքուն հրապարակաչօրէն չեն պաշտպանում նրանց իրաւունքները: Թբիլիսիի հետ լաւ յարաբերութիւնները եւ գոնէ կարճատեւ կայունութիւնը նրանց համար առաջնային են: Հայերը քաղաքականապէս աւելի կազմակերպուած են, քան ատրպէյճանցիները, բայց երկու համայնքներն էլ բողոքի ցոյցեր են կազմակերպել, որոնք որոշ դէպքերում վերածուել են բռնութեան: Թբիլիսիին պէտք է շատ աւելին անի, որ խրախուսի փոքրամասնութիւններին՝ լուծելու նրանց խնդիրները պետական կառոյցների, եւ ոչ թէ փողոցի միջոցով»:

Լեւոն Զուրաբեանի ասելով՝ չնայած վրաստանում մտավախութիւն կայ, որ հայերի եւ ատրպէյճանցիների պահանջները կարող են անջատողական քայլերի լանդեցնել, այնուամենայնիւ, Ջաւախք կատարած իր այցելութեան ընթացքում ինքը չի հանդիպել մարդկանց, ովքեր վրաստանից առանձնանալու ցանկութիւն ունենան: Հայերի պահանջներն այլ են. «Պահանջում են ինքնավարութիւն: Ի հարկէ, տարբեր մարդիկ տարբեր բաներ են հասկանում այդ բառի տակ»: Կան մարդիկ, ովքեր դա ընկալում են որպէս լիակատար քաղաքական ինքնավարութիւն, եւ կան այնպիսիք, ովքեր նկատի ունեն «լեզուամշակութային ինքնավարութիւնը»:

«ԸՆԿԵՐՆԵՐՍ ԸՆՈԱՅԱՆ՝ ԷԼ Ո՞ՒՍ ԸՏԵ ԽՕՍԵՄ»

Շարունակում է լինել

տանամենակ նա աշակերտում է յայտնի բանաստեղծ ու նկարիչ Մ. Ղարաբէկեանին, կոմիւնում նրա ձեռքի տակ: 1951ին մեկնում է Եւրոպա: Լինելով ունիւստական նկարչութեան աւանդույթների հետեւորդ, Հայրապետեանն այստեղ հրապուրուում է իմպրեսիոնիստներով: Անդրանիկ ցուցահանդէսներից ու անդրանիկ յաջողութիւններից յետոյ նա վերադառնում է ծննդավայր ու արդէն սեփական արուեստանոցում ամբողջութեամբ նուիրում է ստեղծագործութեան:

Հայրապետեանն աշխատում է իւղաներկով, մասամբ էլ ջրաներկով: Հաւասար յաջողութեամբ վրձնում է դիմանկարներ, բնապատկերներ, ինչպէս նաեւ բազմամարդ թեմատիկ կտաւներ: Նա իրանահայ նկարիչներից առաջիններից էր, որն անդրադարձաւ 1915ի ազգային ողբերգութեան թեմային: Հայաստանի պետական պատկերասրահում պահոււմ է նկարչի նուիրաբերած մի կտաւ, որը պատկերում է հայ գիւղացիների գաղթը: Նկարը ուշագրաւ է

իր կառուցուածքով: Առաջին հերթին տեսնում ենք գլխահակ, տխուր, մտածկոտ ծերունիների: Յաջորդ շարքի մէջ տեղում դիտողի ուշադրութիւնն է գրաւում կուրծքը բաց, ընտանիքի հետ անվստահ քայլող մի երիտասարդ: Այս կերպարը գետեղուած է յօրինուած քի ճիշդ կերպով, դառնալով պատկերի առանցքը: Նկարիչը դիտողի հայեացքը բեւեռում է հենց նրա վրայ, իր ստեղծագործութեանը հաղորդելով լաւատեսական ոգի: Աշխատանքը լուծած է իմպրեսիոնիստներին յատուկ հնչեղ գոյների ու ազատ վրձնաքսուած քների շարակցմամբ: Այս պարզապէս նպաստում է նկարի բովանդակութեանը ներդաշնակ աշխույժ ու շարժում մթնոլորտի ստեղծմանը:

Կատարման այս սկզբունքով են ամբողջացած նաեւ Հայրապետեանի ժողովրդական կեանքից քաղուած մոտիւլներն ու բնանկարները, որոնց միահիւստում է քնարական տրամադրութիւնը, լուռ թածիլի յոյզերը:

1980ին Հայրապետեանը բնակուել է հաստատել ԱՄՆ-ում:

ԳՐԱԻՈՒԱԾ ՕՐ
Յունուար 21, 2007
Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի նախկին Սաներու Միութեան կողմէ

ԱՇԽԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ
Փաստաթղթային մէջ հաստատութիւն մը կարիք ունի աշխատաւորուիներու cash register-ի վրայ: Հեռաձայն՝ (626) 833-2331:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
ՇՆՈՒՄՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՅԸ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ՎԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆԵ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)
ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
Ժամը 11:00-ից 1:00
Կլէնտլի 26-րդ կայանից

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:
Proud Past, Exciting Future.



NEW YEAR'S EVE DINNER-DANCE

ORGANIZED BY AGBU - AYA GLENDALE-PASADENA CHAPTER

ENTERTAINMENT & SURPRISES

SUNDAY, DECEMBER 31, 2006 – 8:00PM

AGBU ALEX MANOOGIAN CENTER
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104

Music by DJ Heartbeat • Catering by La Fogata

Special Program and Menu for Children in a Separate Hall

Adults \$75 / Children 12 and under \$35 / Children 5 and under Free

RSVP - LIMITED SEATING

Call the AGBU Alex Manoogian Center (626) 794-7942

AGBU 2007 SUMMER INTERN PROGRAMS

IN

NEW YORK, PARIS AND NOW YEREVAN

SUMMER INTERNSHIP APPLICATIONS BEING ACCEPTED NOW.
FOR MORE INFORMATION, EMAIL NYSIP@AGBU.ORG

AGBU CENTENNIAL SPONSORS

Commerce Casino
LOS ANGELES
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

CROWNE PLAZA
HOTELS & RESORTS

Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.

BANK of ORANGE COUNTY Commercial Real Estate
Term Loans and Lines
Free Business Checking
High Rate Money Market

Contact:
Gus Ghusayni
Senior Vice President
411 N. Central Avenue
Glendale, CA 91203
bankoforangecounty.com
(818) 548-2720